Ազգ
Azg
armenian daily

21 ՅՈՒՆԻՍ 2003 ՇԱԲԱԹ 117 (2802)

Հայաստանի ԱԶԳԱՅԻՆ գրադարան
ՀԱՄԱՐ

Փաուել. Իսրայելցիներն ու պաղեստինցիները պետք է առավելագույն ջանքեր գործադրեն

ԹԵԼ ԱՎԻՎ, 20 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Իսրայելցիներն ու պաղեստինցիները «պետք է առավելագույն ջանքեր գործադրեն խաղաղ գործընթացի ապաշրջափակման համար»: Այսպիսի հայտարարությամբ ԱՄՆ-ի պետքարտուղար Քոլին Փաուելը հանդես է եկել Երուսաղեմում Իսրայելի վարչապետ Արիել Շարոնի եւ արտգործնախարար Սիլվան Շալոմի հետ կայացած հանդիպումներից հետո: «Չի կարելի թույլ տալ, որ ահաբեկչությունը կանգնեցնի քաղաքական գործընթացը», ընդգծել է Փաուելը:

Միջազգային միջնորդների քառյակի մշակած «Ճանապարհային քարտեզ» խաղաղ պլանը «իրական հնարավորություն է ստեղծում ահաբեկչությունը կասեցնելու համար», Շարոնի հետ համատեղ կայացած մամուլի ասուլիսում նշել է ամերիկյան արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը: Փաուելը հայտարարել է, որ իրեն «հուսադրում է պաղեստինցի բանտարկյալներին ազատելու եւ ապօրինի հրեական բնակավայրերի էվակուացման ուղղությամբ Իսրայելի կողմից ձեռնարկվող քայլերը»:

Պետքարտուղարը հատկապես նշել է, որ Դիմադրության իսլամական շարժումը՝ «Համասը», «խաղաղության թշնամի է եւ բռնության ու ահաբեկչության կողմնակից»:

ԱՍՈՒԼԻՍ

«Կոալիցիան լինելու է երկարատեւ»

Իր «ներքին համոզմունքը» հայտնեց Ռոբերտ Քոչարյանը

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Անցյալ տարվա դեկտեմբերից «Դողագործում» սկսեց աշխատել օդախցիկների (կամերա) արտադրամասը: Ձեռնարկությունը եւս մեկ անգամ վերագործարկվեց փետրվարի 18-ին՝ նախագահական ընտրությունների նախորդ օրը, երբ այստեղ այցելեց առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարը: Երեկ «Դողագործ» այցելեց արդեն ՀՀ նախագահը: Արտադրամասերում շրջելուց հետո նա անցկացրեց խորհրդակցություն, ապա մամուլի ասուլիս հրավիրեց:

PHOTOLURE

Մինչ այդ, ձեռնարկության ղեկավարներից Սարգիս Ջիբիլյանից տեղեկացանք, որ ամերիկյան TS investment ընկերության կողմից ձեռնարկության բաժնետոմսերի 75 տոկոսը ձեռք բերելուց հետո վերականգնողական աշխատանքներ են կատարվել: Արտադրությունը գազիֆիկացվել է, ինչը կնպաստի արտադրանքի ինքնարժեքի նվազմանը: Կաթսայատուն է կառուցվել օդախցիկների արտադրության համար: 4 ամիս հետո առանձին կաթսայատուն կառուցված կլինի ավտոդողերի արտադրության համար: Գործարանում տեղադրվել են նոր տեխնոլոգիաների հոսքագծեր: Սարգիս Ջիբիլյանը հայտնեց, որ արտադրվելու են մարդատար, բեռնատար կիսաբեռնատար, գյուղատնտեսական մեքենաների դողեր: Նախատեսվում է արտադրանքն արտահանել Ռուսաստան, Վրաստան, Ուկրաինա, Թուրքմենստան:

Տես ♦ էջ 2

«ՀԱՄԱՏԵՂ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՋԱՆՔ»

ՆԱՏՕ-ի ներկայացուցիչները բարձր են գնահատել զորավարժությունների նախապատրաստական աշխատանքները

ԵՐԵՎԱՆ, 20 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Երկու «նորաստեղծ» երկրների՝ «Լեռնակերտի» եւ «Սարաստանի» միջեւ տեղի են ունենում սահմանային ընդհարումներ օգտակար հանածոների պատճառով. նման սցենարով են ծավալվում Հայաստանում անցկացվող ՆԱՏՕ-ի «Համատեղ լավագույն ջանք - 2003» («ՀԼՋ - 2003») զորավարժությունները: Ըստ սցենարի, ծանր մարտերի ընթացքում կանոնավոր եւ անկանոն զինված խմբավորումների կողմից տեղ են գտնում մարդու իրավունքների ոտնահարման եւ պատերազմական հանցագործությունների բազմաթիվ դեպքեր, աճում են հանցավորությունը եւ մահացությունը: ՄԱԿ-ի եւ ՆԱՏՕ-ի միջնորդությամբ հաստատված հրադադարից հետո ՆԱՏՕ-ին հանձնարարվում է համաձայնագրի ռազմական խնդիրների իրականացումը:

ARMENPRESS

Հունիսի 20-ին լրագրողներին ներկայացնելով «ՀԼՋ - 2003»-ի սցենարը, զորավարժությունների համանախագահողներ՝ Թուրքիայի զինված ուժերի ներկայացուցիչ, գնդապետ Ահմեդ Մեքին Քաքարը եւ ՀՀ պաշտպանության փոխնախարարի օգնական, գնդապետ Մուրադ Իսախանյանը (ծագումով Լեռնային Ղարաբաղից) նշեցին, որ զորավարժությունների նպատակն է կատարելագործել ռազմական փոխգործակցությունը փոքր ստորաբաժանումների մակարդակով եւ զարգացնել խաղաղապահ գործողությունների հմտությունները:

Տես ♦ էջ 8

Ադրբեջանը կարող է միանալ Թուրքիա-Հայաստան երկխոսությանը

Հայտարարում է Թուրքիայի ԱԳՆ ղեկավարի խորհրդականը

ԲԱՔՈՒ, 20 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Թուրքիայի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարի խորհրդական Ուղուր Զիյալը Վաշինգտոնում հայտարարել է, որ սոսկ բարիդրացիական հարաբերությունների հաստատման համար է իր ներկայացրած երկիրը շարունակում Հայաստանի հետ երկխոսությունը: Նա ընդգծել է նաեւ, որ Թուրքիա-Հայաստան երկխոսությանը կարող է միանալ եւ Ադրբեջանը: Ինչպես գրում է Բաքվի «Զերկալո» թերթը, հունիսի 9-10-ը Ստամբուլում Թուրքիայի ԱԳՆ-ին առընթեր ռազմավարական հետազոտությունների կենտրոնը անցկացրել է միջազգային համաժողով՝ «Հակամարտությունները Հարավային Կովկասում եւ դրանց լուծման ուղիները» թեմայով: Այդ համաժողովում ելույթի համար հրավիրվել է նաեւ Հայաստանի նախկին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի խորհրդական Ժիրայր Լիպարիտյանը: Թերթի կարծիքով, կայացած միջոցառումը եւս մի անգամ ապացուցում է Արեւմուտքի մտադրությունը՝ Թուրքիան այդ բնագավառում վերածել երկխոսության էպիկենտրոնի: Թերթի տվյալներով, Թուրքիայի քաղաքական վերնախավը բացասաբար չի վերաբերվում այդ դերի հասկացմանն իրեն: Ամեն դեպքում, այս իրադարձությունների հենքին եզրակացնում է, որ բարձրաստիճան թուրք դիվանագետները պաշտպանում են համակարգված հարաբերությունները Հայաստանի արեւմտամետ քաղաքական դեմքերի հետ:

Ռուսաստանը զենքը Վրաստանից տեղափոխում է Հայաստան

ՄՈՍԿՎԱ, 20 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հինգշաբթի ՌԴ պաշտպանության նախարարությունը սկսել է ռուսական զինամթերքի եւ ռազմական տեխնիկայի տեղափոխումը Վրաստանի տարածքից, հաղորդում է «Նովոստի» գործակալությունը: Առաջիններից մեկը կազատվի Սագարեջոյի 130-րդ ռուսական զինապահեստը Վրաստանի արեւելյան հատվածում: Զինամթերքն ու սպառազինությունը կհանձնվեն Հայաստանի Գյումրի քաղաքում տեղաբաշխված ռուսական ռազմահանգրվանին: Առաջին շարասյունը Հայաստան է ճանապարհվել ուրբաթ օրը: Ինչպես սպասվում է, 130-րդ պահեստի պարունակության փոխադրումը կավարտվի հինգ օրվա ընթացքում: Վրացական տարածքից զինամթերքի եւ ռազմական տեխնիկայի դուրսբերման վերաբերյալ ռուս-վրացական համաձայնությունը ստորագրվել է 2002 թվականին, հիշեցնում է գործակալությունը: Բեռնման ընթացքին հետեւում են Վրաստանի ՊՆ եւ իրավապահ մարմինների ներկայացուցիչները:

Վլադիմիր Պուտինը ամաչում է ռուսաստանցիների աղքատության համար

ՄՈՍԿՎԱ, 20 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հայտարարել է, որ «ռուսաստանցիներն իրավունք ունեն եւ պետք է ավելի լավ ապրեն»: Պատասխանելով այն հարցին,. թե նա որպես նախագահ «ինչի համար է ամաչում այսօրվա Ռուսաստանում», Պուտինն ասել է. «Բնակչության աղքատության, ցածր կենսամակարդակի համար»:

Նախագահը խոստովանել է, որ որքան ավելի են հեռանում մայրաքաղաքներից, այնքան ավելի է ծանրանում մարդկանց կյանքը: Հատկապես դա վերաբերում է փոքր քաղաքներին ու ավաններին: Պուտինի ասելով, «այդ հիմնախնդիրների համար ոչ մի հեքիաթային լուծում կամ դեղահաբ գոյություն չունի»:

«Կարելի է խոսել միայն մի բանի մասին, ընդգծել է Վլադիմիր Պուտինը, մարդկանց կյանքի բարելավման կարելի է հասնել միայն Ռուսաստանի տնտեսության ընդհանուր վերելքի, իշխանական ռեսուրսների վերաբաշխման, դասական համակարգի ամրապնդման շնորհիվ»:

Գայթակղությունների հերթական խայծեր կամ դրամաշորթության նոր միջոցներ

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Կա՛ն արդյոք գայթակղություններին դիմադրելու երաշխիքներ որեւէ մեկի համար, երբ ազատությունն ու մարդու իրավունքն իբր բարձրագույն արժեքներ հռչակելու այս պայմաններում ցանկացած երեւույթ վերոհիշյալ արժեքներից օգտվելու բնական պահանջ է դիտվում: Կատարյալ փորձանք ու փորձություն դարձած այս ազատություններից շատերը գլուխները կորցրել են: Մյուս կողմից էլ դրամ աշխատելու տենդն ամենազանազան արկածախնդրությունների է մղում՝ առանց միջոցների մեջ խտրականություն դնելու եւ հետեւանքների մասին մտածելու: Գայթակղությունների գունագեղ խայծը կուլ տալու ամենամեծ հավանականությունը պատանիների ու երիտասարդների մեջ է, եւ ծնողներն էլ մշտապես կանգնած են զանազան տագնապների առաջ:



Հիմա էլ «Թելեպլաս» կոչվող այս նոր ծառայությունը պատուհաս դարձավ գլխներիս, որի շուրջ բարձրացած աղմուկը խլացվել է գրեթե բոլոր ընտանիքներից ներս. իրար զանգում ու զգուշացնում են, թե ուշադիր եղեք երեխաները հանկարծ բակարդը չընկնեն: Բայց ինչպես զգույշ լինես, հեռախոսը տնից դուրս գալուց հետո տանե՞ս, թե հիմնավոր դաստիարակչական-բացատրական դասախոսություն կարդաս:

Տես ♦ էջ 8

«Արդարության» քայլերին սպասենք սեպտեմբերին

«Հիմքեր ունենք չվստահելու նոր ձեւավորված կառավարությանը, որովհետեւ որպես կառավարության գործունեության ծրագրի ուղենիշներ նշվում են արժեքներ, որոնք հետեւողականորեն ոտնահարվում են», երեկ հրավիրված մամլո ասուլիսում հայտարարեց «Հանրապետություն» կուսակցության նախագահ Ալբերտ Բազեյանը: «Արդարություն» դաշինքի լիդերների համոզմամբ, կառավարության ծրագիրն արտահայտում է վերացական մտքեր, բարի ցանկությունների ծրագիր է եւ կոնկրետ չի ուրվագծում իրականացնելու հստակ մեխանիզմներ: Շավարշ Քոչարյանն այն հակասահմանադրական անվանեց: Պրն Քոչարյանի խոսքով, կոալիցիոն կառավարության ծրագրում որեւէ հիշատակում չկա երկրի արտաքին քաղաքականության վերաբերյալ, այդ թվում՝ նաեւ ղարաբաղյան խնդրի կարգավորման: Ըստ բանախոսի, գործադիր իշխանությունն ունի որոշակի գործառույթներ, որոնք պարտավոր է հրապարակային ծրագրով ներկայացնել: Չանելու դեպքում այդ գործառույթները փաստորեն դառնում են ստվերային:

Թաթուլ Մանասերյանը ներկայացրեց իր դիտարկումները տնտեսագետի տեսանկյունից. չեն նշվել տնտեսության զարգացման գերակա ուղղությունները:

Այնուամենայնիվ Շավարշ Քոչարյանը կարծում է, որ կառավարության ծրագիրն ունի նաեւ դրական կողմ: Նշված մի տողով կա խոստովանություն, որ առ այսօր պետական կառավարման համակարգն անազնիվ էր, «կստեղծվի ազնիվ եւ արդյունավետ գործող պետական կառավարման համակարգ...»:

Ալբերտ Բազեյանն ավելորդ չհամարեց եւս մեկ անգամ ներկայացնել դիրքորոշում անցած նախագահական եւ խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ՝ նախագահին անվանելով ոչ լեգիտիմ, խորհրդարանը՝ անօրինական: Որպես քաղաքական խնդիր նշեց, որ «գործող ռեժիմը պիտի հեռանա»: Օրենսդրական առումով «Արդարություն» դաշինքն անհրաժեշտ է համարում առկա օրենքների համապատասխանեցումը հիմնական օրենքին: Այս խնդիրը դաշինքի 12 հոգանոց խմբակցությունը պատրաստվում է իրականացնել հասարակության աջակցությամբ: Մի խոսքով, դաշինքի կոնկրետ քայլերը, ըստ Բազեյանի, կլինեն աշնանը: Իսկ առայժմ ստանձնել են դիտորդի կարգավիճակ եւ սպասում են, թե ինչպես կոալիցիոն կառավարությունը պետք է կյանքի կոչի հասարակությանը տված խոստումները, մանավանդ նշվում է «Օրինաց երկրի» պարագան՝ հաշվի առնելով կուսակցության ծրագրում սոցիալական բնույթի խոստումների առկայությունը:

«Արդարություն» դաշինքը ճիշտ է համարում, որ բոյկոտել է ԱԺ արարողակարգային նիստերը եւ չի մասնակցել նաեւ ԱԺ նախագահի ընտրություններին: Ըստ Գրիգոր Հարությունյանի, քվեարկությունն անցավ բաց մի պարզ պատճառով. չկա վստահություն: Այնուամենայնիվ, իրենց մասնակցությունը չէր փոխի իրավիճակը, քանի որ ամեն ինչ նախապես էր կանխորոշված, եւ «Արդարությունը» որեւէ բան փոխել չէր կարող: Ինչեւէ, մնում է սպասել մինչեւ սեպտեմբեր՝ տեսնելու որքանով է դաշինքն արդարացնում իր ընտրազանգվածի հույսերը, մանավանդ որ գոնե ԱԺ նախագահի ընտրությունների պարագայում կա խոստովանություն. ամեն ինչ կանխորոշված էր, եւ «Արդարությունը» որեւէ բան փոխել չէր կարող:

Մ. Հ.

Ամառային հանգիստ՝ ՀՕՖ-ի աջակցությամբ

Չնայած դեռ լուռ են հանրապետության մյուս ճամբարները՝ Հանքավանի «Լուսաբաց» ճամբարի առավոտները հունիսի 9-ից բացվում են մանկան խինդ ու ծիծաղով: Արդեն հինգերորդ տարին է, որ Ամերիկայի հայ օգնության ֆոնդի հովանավորությամբ այս ճամբարում ամառային հանգիստն են անցկացնում Նուբարաշենի թիվ 11 եւ Նորքի թիվ 2 հատուկ գիշերօթիկ դպրոցների մոտ 100 աշակերտներ: Նրանք կազդուրվում են այստեղ եւ վերականգնում իրենց առողջությունը:

ARMENPRESS

Երեկ ՀՕՖ-ի ներկայացուցիչները՝ Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Գրիգոր Թաթուլյանի ղեկավարությամբ, այցելեցին ճամբար եւ ծանոթացան հանգստի ու ժամանցի պայմաններին: Նրանք բերել էին մանկական գրքեր ու այլ նվերներ: Երեխաների կազմակերպած գեղարվեստական հանդեսը, երգն ու ասմունքը վկայեցին նրանց մեջ նկատելի դրական փոփոխությունների ու առաջընթացի մասին:

Դա հիմք է տալիս մտածելու արդեն հաջորդ տարվա մասին:

ՀՕՖ-Ի ԼՐԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

«Կոալիցիան լինելու է երկարատեւ»

Սկիզբը՝ էջ 1

Ինչ վերաբերում է նախագահի ասուլիսին, ապա Ռոբերտ Քոչարյանը սկսեց այս տարվա առաջին 5 ամիսների ցուցանիշների հրապարակմամբ: Համաձայն դրանց, համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) արձանագրել է 13,8 տոկոս աճ, արդյունաբերական արտադրանքը՝ 21 տոկոս, կապիտալ շինարարությունը՝ 43 տոկոս, արտահանումը՝ 31 տոկոս: Այս ցուցանիշները նախագահը համարեց լավագույն ապացույց, որ տնտեսությունը սկսել է քիչ կախում ունենալ քաղաքականությունից՝ նկատի ունենալով, որ այս ընթացքում տեղի են ունեցել նախագահական եւ խորհրդարանական ընտրություններ:

Կոնկրետ «Դողագործի» վերաբերյալ Ռոբերտ Քոչարյանը նշեց, որ նոր սեփականատերը կատարելու է լուրջ ներդրումներ: Նախագահը խոստացել է աջակցել մի շատ կոնկրետ առաջարկի, ինչի շնորհիվ նաեւ 200 աշխատատեղ կբացվի:

Սակայն մամուլի ասուլիսի ժամանակ հնչած հարցերն ու պատասխանները հիմնականում վերաբերում էին ներքաղաքական զարգացումներին: Կոալիցիոն կառավարության գործունեության հեռանկարներին անդրադառնալով, Ռոբերտ Քոչարյանն ընդգծեց, որ որպես դրա նախաձեռնող, ինքը համարում է, որ հաջողությունն այստեղ նաեւ իր հաջողությունն է: «Ամբողջ Եվրոպան այսպես է աշխատում, ինչո՞ւ մեզ մոտ չպետք է աշխատի», հարց տվեց նախագահը եւ ներկաներին հիշեցրեց 2000 թ. մայիսը, երբ կանխատեսվում էր, որ կառավարությունը կունենա երեք ամսվա կյանք: Մինչդեռ երեք տարվա կյանք ունեցավ: Նախագահը «ներքին համոզմունք» հայտնեց, որ այս կոալիցիան լինելու է երկարատեւ:

Համեմատություններ անցկացնելով 1999 թ. եւ այս տարվա խորհրդարանական ընտրություններին հաջորդող իրավիճակների միջեւ, նշվեց, որ ներքաղաքական կայունության առումով դրանք նման են միմյանց: Սակայն ներկայիս վիճակը Ռոբերտ Քոչարյանն ավելի նպաստավոր համարեց: Եթե 1999 թ. համաձայնություն եղավ երկու, ճիշտ է, ազդեցիկ անհատների շնորհիվ, ապա այժմ քաղաքական ուժերի միջեւ է: Բացի այդ, 1999 թ. չկային տնտեսական զարգացման ներկայիս ցուցանիշները:

«Ավարտվե՞լ է պաշտոնների նշանակումը» հարցին նախագահը պատասխանեց, որ դա հավերժ գործընթաց է: Այն պաշտոնյաները, ովքեր չեն արդարացնում իրենց, չեն ստանում անհրաժեշտ արդյունքները, կփոխվեն: Ինչ վերաբերում է ընդդիմության հետ իշխանության հարաբերություններին, ապա Ռոբերտ Քոչարյանը նշեց, որ եթե ընդդիմությունը պաշտոններ ստանա, ապա կդադարի այդպիսին լինելուց:

Ընդդիմությունը պետք է իշխանությունների սխալները մատնանշի եւ քննադատի: Ընդդիմության հետ համագործակցությունը հնարավոր է, երբ այս կամ այն կարեւոր հարցի շուրջ առկա է նման տեսակետ: Իսկ որ ընդդիմադիր պատգամավորները չեն մասնակցում ԱԺ նիստերին, նախագահը «լուրջ միտում եւ հետեւանք» չի տեսնում, նշելով, որ ժողովուրդը նրանց քվե է տվել, որպեսզի մասնակցեն նիստերին:

Հացահատիկի եւ ալյուրի գների թանկացման վրա ազդել չի կարելի քաղաքական որոշմամբ, քանի որ, ըստ Ռոբերտ Քոչարյանի, շուկան մրցակցային է: Եվ ներկայիս գների նվազումը, նրա հավաստմամբ, դարձյալ դրա հետեւանք է: Այս առնչությամբ տրված հարցին պատասխանելով՝ նախագահը վերստին ընդգծեց Ռուսաստանից հացահատիկի ներմուծման պարագան եւ դրա հետ կապված հանգամանքները:

Խախտումներ եղել են, բայց ոչ էական

ՍԴ-ում պնդում են ընտրական հանձնաժողովները

Երեկ Սահմանադրական դատարանը մեկօրյա ընդմիջումից հետո շարունակեց խորհրդարանական ընտրությունների արդյունքների հետ կապված դիմումների քննարկումը: Մասնավորապես, դատարանի երեկվա նիստում քննվեց թիվ 3 ընտրատարածքում գրանցված պատգամավորության թեկնածու Ղուկաս Ուլիխանյանի դիմումը:

Այս ընտրատարածքում, ըստ մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքների, հաղթող է ճանաչվել Ռաֆիկ Պետրոսյանը՝ ստանալով մոտ 5 հազար ձայն: Ղուկաս Ուլիխանյանը զբաղեցրել է երրորդ տեղը՝ ստանալով մոտ 2 հազար 600 ձայն: Երկրորդ տեղը զբաղեցնող Արոս Օսիպյանը, ստանալով մոտ 3 հազար ձայն, չի միացել Սահմանադրական դատարան դիմող Ղուկաս Ուլիխանյանին:

Այս էլ որերորդ դիմումատուին Սահմանադրական դատարանում ներկայացնում էր Արտակ Զեյնալյանը: Ըստ վերջինիս, թիվ 3 ընտրատարածքում, ինչպես եւ բողոքարկվող մյուս ընտրատարածքներում, եղել են բազմաթիվ խախտումներ: Սակայն թիվ 3 ընտրատարածքին յուրահատուկ պատահել է այն, որ ընտրատարածքի 8 տեղամասերում տեղամասային ընտրական հանձնաժողովները չեն ամփոփել ընտրությունների արդյունքները: Դրա փոխարեն քվեաթերթիկների չզմռսված պարկերն ուղարկվել են ընտրատարածքային ընտրական հանձնաժողով, որտեղ եւ ամփոփվել են ընտրությունների արդյունքները:

Նույն նշված 8 ընտրատեղամասերում հանձնաժողովների կազմած ընտրությունների արդյունքների վերաբերյալ արձանագրությունները ստորագրել են հանձնաժողովների 9 անդամների փոխարեն միայն չորսը կամ հինգը: Տեղամասային ընտրական հանձնաժողովներում, ըստ դիմումատուի, նման իրավիճակի պատճառ են ծեծումները:

Դատարանում ներկայացվեց նաեւ, որ թիվ 3 ընտրատարածքում խիստ մեծ տարբերություններ են ի հայտ եկել նախնական եւ վերջնական ամփոփիչ վերջնական արձանագրություններում նշված անճշտությունների չափերի առումով: Ինչպես նաեւ տարբեր են մեծամասնական եւ համամասնական ընտրակարգերով ԱԺ ընտրություններին, նաեւ հանրաքվեին ընտրողների մասնակցության արձանագրված թվերը:

Այս ընտրատարածքում դիմումատուի վստահված անձինք ներկայացրել են բազմաթիվ դիմում-բողոքներ ընտրատեղամասերում ստուգումներ կատարելու պահանջով: Ստուգումներ անցկացվել են միայն 4 ընտրատեղամասերում:

Թիվ 3-ի տեղամասերից մեկում նաեւ գրանցվել է ծեծկռտուքի դեպք, որի կապակցությամբ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը նշեց, որ վեճը կասեցվել է: Ընդ որում, անհասկանալի է մնացել, թե ով ում հետ եւ ինչու է վիճում:

Պատասխանող կողմ թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը փորձում էր բացատրել դիմումատուի նշած հանգամանքների բնույթը, ընդունելով, որ, օրինակ, ծեծկռտուքի դեպքը տեղի ունեցել է, բայց չի ազդել ընտրությունների արդյունքների վրա:

Սահմանադրական դատարանի նախագահը նշեց, որ նախնական արդյունքները հիմք չեն կարող լինել դատարանի համար, ուստի պետք է ներկայացնել փաստարկներ, որոնք կապված են միայն ընտրությունների վերջնական արդյունքների հետ:

Ինչեւէ, դատարանը կողմերին լսելուց հետո որոշեց, որ որոշում կայացնելու համար անհրաժեշտ են նոր փաստաթղթեր, ուստի նիստը հետաձգվեց մինչեւ հունիսի 28-ը:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Տրանսպորտային քաշքուկ

Երեւանում տնից դուրս գալը, հատկապես կեսօրին, համարձակություն է պահանջում: Շոգը քիչ է, հավելյալ՝ քաղաքային խճճված տրանսպորտն ու մայրաքաղաքային այս խայտառակ քանդուքանդերը: Քանդում ու վերաքանդում են, մեր առողջության մասին մտածողն ո՞վ է: Երեկ փակել էին Բաղրամյան մայրուղին, եւ Կիեւյան փողոցը շոգից ու երթուղային տաքսիներից ծաք էր տալիս, մեքենաներն իրար գլխի էին թափվում, աղմուկը, մարդկանց հրմշտոցը, շչակների անդուր ծղրտոցները, վարորդների գոռգոռոցները նյարդեր էին սղոցում: Շոգը չլիներ, ոտքով քայլես, պրծնես, բայց մի կողմից էլ փողոցների դարուփոսերը չեն թողնում: Տեսնես ո՞ր խելոքի մտքի արգասիքն է՝ քաղաքն այսպես միանգամից ավերելու գաղափարը: «Տրամվայի գծերը հանելու համար են փակել», ավտոբուսում ասաց մի ուղեւոր, եւ բոլորը տխրեցին: Այս ամենից հետո սարսափելին Հանրապետության հրապարակը շրջանցելու տառապանքն է: Փոշին ու կեղտը մինչեւ հոկտեմբեր «ըմբոշխնելու» համբերությունը դեռ շարունակելու է հետապնդել մեզ՝ ծառերի ժամանակից շուտ կանաչազրկվելու հեռանկարով եւ վաճառասեղաններին կռթնած շաղված-մարած մարդկանց համբերությունը սպառվելու հույսով: Եվ ինչո՞ւ ենք այսքան համբերատար:

Մ. Բ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետութեան 47
Ֆաքս: 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ /հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ /հեռ. 529221
Տնօրէն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ /հեռ. 529353
Համակարգ. ծառայութիւն
/հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայություն
/հեռ. 529353
Apple Macintosh
համակարգչային շարուածը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում

«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

Արցախը բերդ է, հայության օջախ

Ազգային հերոս Մոնթե (Ավո) Մելքոնյանի զոհվելու 10-ամյակի միջոցառումներ Երեւանում եւ Արցախում

Մոնթեի ղեկավարած մարտերը համարյա միշտ էլ պսակվել են հաջողությամբ։

Գեներալ-լեյտենանտ Սեյրան Օհանյան

Որքան հեռանում ենք այդ օրերից, որքան ժամանակ է անցնում, այնքան Մոնթեի կերպարը բարձրանում է որպես մեր ազգային գաղափարի եւ բռնադատված արդարության զգաստ փարոսի եւ ազատամարտիկի։

Գեներալ-մայոր Հմայակ Հարոյան, 2003 թ. մայիս

Մոնթեի զորավարական տաղանդը բարձր են գնահատել թե՛ ռազմական, թե՛ քաղաքական այն գործիչները, ովքեր մոտիկից ճանաչել են մեծ նվիրյալին։ Գեներալ Անատոլի Զինեւիչին զարմացրել են Մոնթեի անսպառ եռանդն ու ռազմավարական տաղանդը։

Եթե մենք կորցնենք Արցախը, մենք կշրջենք մեր ժողովրդի պատմության վերջին էջը

Վառ հայրենասեր, անկրկնելի անհատականություն, հմուտ ռազմավար Մոնթե (Ավո) Մելքոնյանի զոհվելու 10-րդ տարելիցի միջոցառումների շարքը սկսվեց Երեւանի «Մոսկվա» կինոթատրոնում՝ Մոնթեին նվիրված լուսանկարների ցուցահանդեսի բացմամբ։

Նույն օրը Երեւանի պետական համալսարանի լեփ-լեցուն դահլիճում անցկացվեց Մոնթեին նվիրված հուշ-երեկույթ։

Ելույթներով հանդես եկան ԵՊՀ ռեկտոր, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը, գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադեւոսյանը (Կոմանդոս), գեներալ-մայոր Մովսես Հակոբյանը, «Մոնթե Մելքոնյան» հասարակական կազմակերպության տնօրեն, Մոնթեի հին ընկեր Ալեք Ենիգոմշյանը, Մոնթեի եղբայրը՝ փիլիսոփայության դոկտոր Մարգարը, Մոնթեի այրին՝ Սեդան եւ ուրիշներ։ Բոլոր ելույթ ունեցողներն ըստ արժանվույն գնահատեցին 1991-ի սեպտեմբերից մինչեւ դեկտեմբեր Լեռնային Ղարաբաղի Շահումյանի շրջանի պաշտպանության եւ գրավված գյուղերի ազատագրման ժամանակ իր խիզախությամբ աչքի ընկած, միշտ հաղթանակելու վճռականությամբ տոգորված, ազատության համար մարտնչողներին աներեր առաջ տանող աննկուն Ավոյին։ Բարդ իրավիճակներում արագորեն կողմնորոշվող Մոնթեն, ընդգծեցին ելույթ ունեցողները, որ մինչեւ Հայաստան գալը մասնակցել է երկու պատերազմի ու կուտակել որոշ փորձ, իրեն փայլուն կերպով դրսեւորեց առանձնապես 1992-ի փետրվարից, երբ Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի ռազմական շտաբի պետն էր, ապա հրամանատարը։ Նրա եւ գնդապետ (այժմ գեներալ-մայոր) Հմայակ Հարոյանի ջանքերով Մարտունու տարածաշրջանը դառնում է պատմական Արցախի ամենապաշտպանվածը եւ անխոցելին։

Մոնթե Մելքոնյանի հրամանատարությամբ գործող ռազմական ուժերը թշնամուց կարողացան խլել տասնյակ տանկեր, զրահամեքենաներ, ռազմական տեխնիկա եւ ստիպեցին հակառակորդին տալու հազարավոր զոհեր, վիրավորներ։

ՀՀ կառավարությանն առընթեր ԱԻ վարչության պետ, գեներալ Հ. Հարոյանը հիշեցրեց, որ Մոնթեն 1993-ի մարտին մասնակցել է Մարտակերտի շրջանի ազատագրմանը եւ մարտի վերջին ու ապրիլի սկզբին ղեկավարել Քելբաջարի (Քարվաճառ) գործողություններին՝ Ղարաբաղի կողմից։

Հուշ-երեկույթում հանդես եկավ Խորեն Պալյանի «Տոհմիկ» երգչախումբը, ելույթ ունեցան այլ խմբեր, անհատ կատարողներ, ասմունքով՝ դերասան Վոլոդյա Աբաջյանը։ Ցուցադրվեց Մոնթեին նվիրված փաստավավերագրական ֆիլմ՝ նկարահանված ԵՊՀ-ի ուսանողների կողմից։

Հաջորդ չորս միջոցառումները տեղի ունեցան Լեռնային Ղարաբաղում։ Ինձ հնարավորություն ընձեռվեց ՊՆ ներկայացուցիչների, ԱՄՆ-ից, Արգենտինայից, Ֆրանսիայից եւ Գերմանիայից ժամանած հայ եւ այլ ազգության ներկայացուցիչների եւ մի խումբ լրագրողների հետ լինել ԼՂ Հանրապետությունում եւ մասնակցել բոլոր միջոցառումներին։ Բերձոր (Լաչին) չհասած՝ Մոնթե Մելքոնյանի անվան պուրակում մասնակցեցինք ծառատնկման աշխատանքներին, հաջորդ օրը Մարտունի քաղաքում, Լեւոն Թոմաջյանի հեղինակությամբ 5 մ բարձրությամբ վեր խոյացող Մոնթե Մելքոնյանի մարմարյա հուշարձանի մոտ, հրապարակում, անցկացվեց ոգեկոչման հավաք։ Ներկա էին ԼՂՀ կառավարության ներկայացուցիչներ։ Ելույթ ունեցան ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ Օլեգ Եսայանը, Մարտունու քաղաքապետարանի վարչակազմի ղեկավար Միքայել Հովհաննիսյանը, գեներալ-մայոր Մովսես Հակոբյանը, ԼՂՀ պաշտպանության նախարարի տեղակալ, գնդապետ Վլադիմիր Խաչատրյանը, մարտական ընկերներից Սարոն, Սաշիկը, Ալեք Ենիգոմշյանը, Մոնթեի եղբայր Մարգարը...

Հաջորդ օրը ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտում Մոնթեին նվիրված հուշ-երեկոյում ընդարձակ ելույթով հանդես եկավ ԼՂ Հանրապետության պաշտպանության նախարար, գեներալ-լեյտենանտ Սեյրան Օհանյանը։ Ելույթներ ունեցան Պարգեւ Սրբազանը եւ ուրիշներ։

Չորրորդ միջոցառումը Լաչինից մի քանի կմ հեռու գտնվող Քարեգահ գյուղում էր։ Գյուղն ունի միջնակարգ դպրոց։ «Մոնթե Մելքոնյան» հասարակական կազմակերպության տնօրեն, Ալեք Ենիգոմշյանի շնորհիվ կառուցվել եւ արդեն սկսել է գործել երիտասարդական պալատը։ Ձեւավորվում է պարային խումբը։ Արցախ Բունիաթյանն իր «Արյունոտ օրեր» գիրքը նվիրեց երիտասարդական պալատին։

Մոնթեի մասին անմոռանալի հուշեր պատմեցին գեներալ Հմայակ Հարոյանը, գնդապետ Գալուստ Գալստյանը։ Արցախում անցկացված բոլոր միջոցառումները նկարահանում էին ՀՀ եւ ԼՂ օպերատորները։

ՌՈԲԵՐՏ Բ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Երեւան-Լեռնային Ղարաբաղ

ՕՇԱԿԱՆ

Արագածոտնի հոգեւոր եւ մշակութային ժառանգությունը

Երկօրյա գիտաժողովի քննարկումներում...

Մեծ Հայքի Արարատ աշխարհի Արագածոտն գավառը Հայաստանի առավել նշանավոր գավառներից է, որ վարչականորեն ձեւավորվել է մ.թ.ա IX դարում եւ տարածվել արեւմուտքում մինչեւ Ախուրյան գետը, հարավում՝ մինչեւ Երասխ, իսկ արեւելքում մինչեւ Հրազդան գետը։ Սկզբում եղել է արքայական, իսկ հետո նախարարական նստավայր, հետեւապես հարուստ է բազմաթիվ պատմական հուշարձաններով։ Մշակութային ու հոգեւոր առումներով Արագածոտնն առանձնահատուկ դեր ունի հայոց պատմության մեջ, որն էլ ծնունդ է տվել բազում ուսումնասիրությունների ու մենագրությունների։

Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատանը, որը հաստատումից ի վեր դարձել է հայագիտական գիտաժողովների յուրօրինակ կենտրոն, Արարատյան հայրապետական թեմի հովանավորությամբ երեկ գումարվեց «Արագածոտն. հոգեւոր եւ մշակութային ժառանգություն» խորագրով երկօրյա գիտաժողովը՝ նվիրված Ս. Էջմիածին մայր տաճարի օծման 1700-ամյակին։

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանի եւ Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ Բագրատ վրդ. Գալստյանի ողջույնի խոսքերից հետո ելույթ ունեցավ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդ Նավասարդ եպս. Կճոյանը։ Նրա խոսքերով «թեմը ողողված է նշանավոր վանքերով, եկեղեցիներով ու սրբատեղիներով՝ 177 գործող խոնարհված եկեղեցիներ, մատուռներ», որոնք անգնահատելի հարստություններ են, մեր մեսրոպատառ ինքնության արտահայտություններ, արժանի պահպանման ու մեծագույն հոգատարության։

Տարածքի հուշարձանների պահպանման եւ վերականգնման խնդիրների մասին խոսեց ՀՀ մշակույթի նախարարության հուշարձանների պահպանության գործակալության պետ Գագիկ Գյուրջյանը։ Նշելով, որ այնտեղ հաշվառված ու պետականորեն գրանցված են 1755 հուշարձաններ, որոնց մի մասը վերջին մի քանի տարիներին վերականգնվեց ու ամբողջական տեսքի բերվեց, նա անդրադարձավ առաջիկա ծրագրերին՝ ընդգծելով որոշ հուշարձաններ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցուցակներում մտցնելու խնդիրը։ Զբոսաշրջության զարգացման համար գործող Երեւան - Ամբերդ երթուղում ընդգրկված են Տեղերի վանքը, Աղցի հայ արքաների դամբարանը, Ագարակի արգելոցը, Սաղմոսավանքը, Հովհաննավանքը եւ այլ արժեքավոր հուշարձաններ։

«Արագածոտնի գավառը հայոց պատմության մեջ» զեկույցում ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան Բաբկեն Հարությունյանը համառոտակի ներկայացրեց գավառի պատմական հարուստ անցյալի գլխավոր անցքերը՝ Հայկյաններից մինչեւ Մեծ Հայքի գավառաբաժանում, ապա՝ խորհրդային շրջան։

Այնուհետեւ լսվեցին Արագածոտնի պատմամշակութային ժառանգությունն ամբողջացնող մի շարք ելույթներ՝ «Մեսրոպ Թաղիադյանը եւ իր ժամանակը» (զեկ. Մեսրոպ արք. Աշճյան), «Պեղումներ Օշականում» (զեկ.՝ ԳԱԱ հնագիտության ինստիտուտի տնօրեն Արամ Քալանթարյան), «Արագածոտնի պատմաճարտարապետական հուշարձանների պահպանության ուղղությամբ իրականացված միջոցառումներ» (զեկ.՝ ակադեմիկոս Վարազդատ Հարությունյան) եւ այլն։ Ուշագրավ էր հատկապես Օշականի պեղումների վերաբերյալ ելույթը։ Լինելով Հայաստանի հնագույն բնակավայրերից մեկը, Օշականը հարուստ է տարբեր դարաշրջանի հուշարձաններով, որոնց մեջ առանձնանում է Դիդիկոնդ բլրի վրա գտնվող ուրարտական ժամանակաշրջանի գողտրիկ դղյակ-ամրոցը, ուր մարդկային բնակության հետքերը նկատելի են վաղ ժամանակներից։ Բլուրը եւ նրա ստորոտները կառուցապատվել են ուշ ուրարտական ժամանակաշրջանում՝ Քրիստոսից առաջ 7-6-րդ դարերում։ Պեղումները շարունակվում են, եւ նախնական արդյունքներն արդեն իսկ պատկերացում են տալիս, որ ուրարտական մշակույթի եւ ճարտարապետության բարձր զարգացումը տեղական մշակույթի հետ սերտ կապեր ունի։

Այսօր գիտաժողովը կշարունակի աշխատանքները երեք մասնաճյուղերով, որոնցից առաջինում կլսվեն Արագածոտնի պատմական-հոգեւոր նկարագրի, երկրորդում՝ պատմաճարտարապետական հուշարձանների, իսկ երրորդում՝ մշակութային կյանքի վերաբերյալ ելույթներ։

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

5-րդ մասնաշենքի «ռասիստները»

Ուսանողներն անելանելի վիճակում են

Զեյթունի ուսանողական ավանի 5-րդ մասնաշենքի ուսանողներն ահ ու կասկածների մեջ են, թե գալիք ուսումնական տարում զրկվելու են իրենց հանրակացարանային համեստ բնակատեղիից։ Նրանց առաջարկել են ազատել զբաղեցրած սենյակները։ Այս ամենը մեկուկես ամսվա պատմություն ունի։ Այս ընթացքում ուսանողները հասցրել են դիմել եւ ՀՀ նախագահին, եւ վարչապետին, եւ ԱԺ-ին, եւ կրթության ու գիտության նախարարին։ Ոչ մեկից պատասխան չեն ստացել, բացառությամբ, թերեւս, նախագահի աշխատակազմից ստացված տեղեկանքի, որով նրանց հայտնում են, թե իրենց դիմումի պատասխանը կրթության նախարարությունից պիտի ստանան։ 5-րդը ժամանակին բացառապես արվեստի բուհերի մասնաշենք է եղել, այսօր եւս այստեղ բնակվում են մասնավոր ու պետական բուհերի արվեստի ֆակուլտետների՝ թվով 200 ուսանողներ։ Մինչ նրանք նամակ էին հղել հերթական ատյանին՝ կրթության ու գիտության նախարարությանը եւ պատասխանի էին սպասում, մասնաշենքի կառավարիչ Մխիթարյանը համապատասխան լիազորագիր է ստանում, որի հիման վրա էլ կնքվում է չարաբաստիկ պայմանագիրը՝ մասնաշենքը բժշկական համալսարանին հանձնելու վերաբերյալ։ Երեկ, ավանի 4-րդ մասնաշենքի կիսախարխուլ դահլիճում ուսանողները մամուլի ասուլիս էին կազմակերպել՝ հուսալով ԶԼՄ-ների օգնությամբ հասնել գոնե խնդրի հստակեցմանը։ Ուսանողները պնդում են, որ մինչ օրս որեւէ մեկը գրավոր հավաստիացում չի տվել, թե սեպտեմբերին իրենք դրսում չեն հայտնվելու։ Խոստումներն ու պարզաբանումները լինում են բանավոր, թռուցիկ, մշուշոտ ու խուսափողական։



Տագնապեցնող փաստերն ավելի շատ են։ Օրինակ, վերջերս ոստիկանի ուղեկցությամբ մեկը եկել է (հավանաբար, բժշկական համալսարանի ներկայացուցիչ) եւ սենյակներում եղած-չեղածը գույքագրել։ Նրանց հավաստացնում են, թե մտադիր են 200 «վտանգված» անձանց տեղավորել 2 հարկերի 60 սենյակում։ Ուսանողները զայրացած են, որովհետեւ, ըստ իրենց, «մեկ սենյակի նեղլիկ, հարմարություններից զուրկ տարածքում հնարավոր չէ միաժամանակ տեղավորել ջութակահարին ու դաշնակահարին, հնարավոր չէ եւ պարապել, եւ ճաշ ուտել ու լվացք անել»։ Քանի որ հանրակացարանն այդ բոլոր հարմարություններից զուրկ է, եւ որոշում կայացնողները «ղեկավարվել են խորհրդային տարիների հիշողություններով»։

Ուսանողներին վրդովեցնում է նաեւ այն իրողությունը, որ պայմանագիրը, գործարքը կնքվել են առանց իրենց գիտության ու մասնակցության։ Նրանք նույնիսկ ժողով են գումարել, քննարկել խնդիրը, եւ ուսխորհուրդն ինքն իր նախաձեռնությամբ պայմանագիրն անվավեր է հռչակել։ Այդ մասին որոշումը ներկայացվել է նորանշանակ նախարարին։ Վերջինս խոստացել է նախարարության աշխատողներից, բուհերի ռեկտորներից, ուսանողների ներկայացուցիչներից կազմված հանձնաժողով ստեղծել, որի որոշումը կարող են ընդունել թե ոչ, իրենց գործն է։ Ուսանողները չեն հավատում, որ այդ հանձնաժողովն իրենց շահերին համապատասխան որոշում կկայացնի։ Նրանց կարծիքով, հանձնաժողով ստեղծելու որոշումը (կասկածում են՝ գոյություն ունի՞ արդեն, թե ոչ) պարզապես ժամանակ շահելու, խնդիրը ձգձգելու միջոց է։ Բուհական քննությունները շուտով ավարտվելու են, եւ ուսանողները, որոնց մեջ մեծաթիվ են անապահով ընտանիքների զավակները, ստիպված լքելու են հանրակացարանը։ Նրանց մեջ կան նաեւ արտասահմանցի ուսանողներ, որոնք ներկա էին բողոքի ասուլիսին։ Իրենց սենյակները նրանք նորոգել են սեփական միջոցներով, ծախսելով 400-500 դոլար, եւ հիմա դուրս են հրավիրվում այդտեղից։ Ուսանողները պահանջում են նաեւ, որ մասնաշենքեր տրամադրելիս չպետք է առաջնորդվել բուհերի աղքատության ու հարստության «չափորոշիչներով»։ Այլապես, հարուստ բուհերի ուսանողները տանիք կունենան, աղքատներինը՝ ստիպված կլինեն դեսուդեն ընկնել։

Ի դեպ, ընդվզող ուսանողներին մեղադրում են ռասիզմի մեջ, սակայն նրանք հայտարարում են, որ «սոցիալապես անապահով ուսանողներին զրկելով օթեւանից, եւ անհամեմատ լավ վիճակում գտնվող օտարերկրացուն օթեւան տրամադրելով, մեր կառավարությունն ինքն է սրում տարբեր ազգերի ներկայացուցիչ ուսանողների հարաբերությունները։

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Զենքը եւ քաղաքացին

Զինվեք համբերությամբ

5 տարի առաջ, 1998 թ. հուլիսի 3-ին ԱԺ-ն հաստատեց զենքի օրենքի նախագիծը։ Կարելի էր կարծել, թե օրենքը հասարակական լայն հնչեղություն կստանա եւ երկար ժամանակ բուռն քննարկումների առարկա կդառնա։ Սակայն մեր հարցումները վկայեցին, որ քչերն են լավատեղյակ օրենքի այն հիմնական դրույթներին, որոնք կոչված են կարգավորելու ինքնապաշտպանական նպատակներով զենք կրողների եւ ինքնապաշտպանական միջոցներից զուրկ քաղաքացիների հարաբերությունները։

Մտքեր եւ տանկեր

Ապրիլ-մայիսին հարցման ենթարկված 107 երեւանցիների 38 տոկոսը պատկերացում անգամ չունի զենքի օրենքի գոյության մասին, 33 տոկոսը համարում է, որ զենք կրելու իրավունքը պետք է պատկանի միմիայն քաղաքացիների անվտանգությունն ապահովող ուժային կառույցների (բանակ, ոստիկանություն, հատուկ ծառայություններ) աշխատակիցներին, 12 տոկոսի կարծիքով այդ իրավունքից պետք է անվերապահորեն օգտվեն նաեւ գործարարները, 11 տոկոսի կարծիքով՝ նաեւ լրագրողները, ըստ 5,5 տոկոսի՝ նաեւ 18 տարին լրացած եւ իրեն խոցելի համարող գեղեցիկ սեռի յուրաքանչյուր ներկայացուցիչ, 29 տոկոսը ինքնապաշտպանական նպատակներով թույլատրելի է համարում միայն այն զինատեսակների (էլեկտրամահակ, գազային ատրճանակ եւ այլն) կիրառումը, որոնք կարող են ընդամենը վնասազերծել օրինազանցին, բայց չպատճառել վերջինիս կյանքին ու նրան հաշմանդամ չդարձնել։

Ի դեպ, հարցման ենթարկված երեւանցիների 7 տոկոսը նշել է, որ վատ չէր լինի, եթե իբրեւ բարոյական վնասի փոխհատուցման ձեւ օրինականացվեր մենամարտը։ Սա տպագրական վրիպակ չէ։ Խոսքն իրոք մենամարտի, մարտավկաների ներկայությամբ բավարարում ստանալու եղանակի (սատիսֆակցիայի) վերականգնման մասին է, որը հարգի էր 18–19-րդ դարերում։ Դա, ըստ այդ նույն 7 տոկոսի, կնպաստեր հանցագործությունների թվի նվազմանը, եւ ավելի քիչ մարդիկ կույր ցասման անմեղ զոհ կդառնային։

Նրանք, ովքեր չեն հասցրել ծանոթանալ զենքի մասին օրենքին, կարծում ենք, դեռ ժամանակ կտրամադրեն այդ օգտակար զբաղմունքին։



Հայաստանի Հանրապետության օրենքը զենքի մասին (քաղվածք)

Հոդված 2. Զենքի տեսակները։ Զենքը, ըստ համապատասխան սուբյեկտների օգտագործման նպատակայնության, ինչպես նաեւ հիմնական չափանիշների եւ բնութագրող հատկանիշների, ստորաբաժանվում է.

ա) քաղաքացիական,
բ) ծառայողական,
գ) մարտական։

Հոդված 3. Քաղաքացիական զենք։ Քաղաքացիական է համարվում այն զենքը, որը նախատեսված է ՀՀ քաղաքացիների ինքնապաշտպանության, ինչպես նաեւ որսորդությամբ եւ սպորտով զբաղվելու համար։ Քաղաքացիական զենք համարվող հրազենը պետք է իր կառուցվածքով բացառի կրակահերթով կրակելու հնարավորությունը եւ չպետք է ունենա տասը փամփուշտից ավելի տարողունակությամբ պահունակ (թմբուկ)։

Քաղաքացիական զենքըստորաբաժանվում է.

1. ինքնապաշտպանական,
2. սպորտային,
3. որսորդական,
4. ազդանշանային։

Ինքնապաշտպանական զենքն իր հերթին ստորաբաժանվում է.

ա) ողորկ-երկարափող հրազեն, այդ թվում ՀՀ առողջապահության հանրապետական մարմնի սահմանած վնասվածքային գործողության նորմերին համապատասխանող փամփուշտներով հրազեն.

բ) անփող հրազեն. առողջապահության հանրապետական մարմնի սահմանած վնասվածքային, գազային եւ լուսաձայնային ազդեցության նորմերին համապատասխանող փամփուշտներով հրազեն.

գ) գազային զենք. առողջապահության հանրապետական մարմնի կողմից կիրառման համար թույլատրված արցունքաբեր կամ գրգռիչ նյութերով լիցքավորված գազային ատրճանակներ (այդ թվում, թմբուկավոր ռեւոլվեր), դրանց փամփուշտները, մեխանիկական փոշեցրիչներ, աէրոզոլային եւ այլ սարքեր.

դ) ՀՀ ստանդարտացման, չափագիտության եւ սերտիֆիկացման հանրապետական գործադիր մարմնի պահանջներին եւ առողջապահության հանրապետական մարմնի սահմանած նորմերին համապատասխանող էլեկտրահարող սարքեր եւ կայծային պարպիչներ։

Հոդված 13. ՀՀ քաղաքացիների զենք ձեռք բերելու իրավունքը։ Քաղաքացիական զենք ձեռք բերելու իրավունք ունի ՀՀ 18 տարին լրացած քաղաքացին, սույն օրենքի 9-րդ հոդվածի երկրորդ մասով նախատեսված լիցենզիա տալու լիազորությամբ օժտված ներքին գործերի համապատասխան մարմնից զենքի որոշակի տեսակ ձեռք բերելու համար լիցենզիա ստանալուց հետո։

Քաղաքացին լիցենզիայի հիման վրա իրավունք ունի ձեռք բերելու անփող հրազեն, գազային ատրճանակներ (այդ թվում թմբուկավոր ռեւոլվեր), ազդանշանային զենք, որոնք երկշաբաթյա ժամկետում պետք է գրանցվեն ՆԳ (այժմ՝ ոստիկանության) համապատասխան մարմնում։ Լիցենզիայում թույլատրվում է գրանցել վերը նշված զենքի տեսակներից ոչ ավելի, քան հինգ միավոր։ Լիցենզիան տրվում է հինգ տարի ժամանակով եւ միաժամանակ համարվում է զենք պահելու եւ կրելու թույլտվություն, եթե նրանում կատարվել է համապատասխան նշում զենքի գրանցման վերաբերյալ։

Մեխանիկական փոշեցրիչները, աէրոզոլները, աէրոզոլային եւ այլ սարքերը, որոնք լիցքավորված են արցունքաբեր կամ գրգռիչ նյութերով, էլեկտրահարող սարքերը, կայծային պարպիչները ոչ ավելի, քան 7,5 ջոուլ փողային էներգիայով եւ մինչեւ 4,5 մմ տրամաչափով օդամղիչ զենքի տեսակները գրանցման ենթակա չեն, եւ քաղաքացին իրավունք ունի դրանք ձեռք բերել առանց լիցենզիայի։

«Ահա թե ձեզ ինչ եմ ուզում նախազգուշացնել։ Առաջադրանքը կատարելիս զենք կվերցնեք հեղինակության համար։ Սակայն եւ ոչ մի պարագայում ձեզ չի թույլատրվում այն գործադրել։ Ո՛չ մի պարագայում։ Դուք ինձ հասկացա՞ք»։ **(Էռնեստ Հեմինգուեյ)**

Նրանց, ովքեր ոչ միայն ծանոթ են զենքի օրենքին, այլեւ մասնագիտության բերումով ունեն զենք կրելու իրավունք եւ գործնականում զգում են դրա անհրաժեշտությունը, խորհուրդ ենք տալիս ծանոթանալ ինքնապաշտպանական միջոցների որոշ տեսակների, այսպես ասած, տեխնիկական բնութագրին, որ փողը «ջուրը չթափեն» եւ ճակատագրական պահին թյուրիմացությունից խուսափեն։

Գազային աէրոզոլներ

Ինքնապաշտպանությո՞ւն, թե՞ ինքնախաբեություն

Միանգամից ասենք, որ պետք չէ հալած յուղի տեղ ընդունել գազային աէրոզոլների թիթեղյա սրվակների վրա դրված բոլոր գրությունները ու նշանները եւ հավասալ սրվակում զետեղված խտացված գազի ծավալն «արձանագրող» ուռճացված թվերին. հակառակ դեպքում կարելի է կարծել, թե այդ սրվակներից յուրաքանչյուրն ընդունակ է մի քանի տարի անընդմեջ հետ մղելու տարաբնույթ հանցախմբերի հարյուրավոր գրոհները։

Օրինակ, գազային սրվակների վրա անգլերեն, ռուսերեն կամ այլ լեզուներով նշված Paralitic (կամ Paralyse), Паралитики գրությունը ակնհայտ կեղծիք է։

Լավատեղյակ աղբյուրները ամենայն պատասխանատվությամբ հայտարարում են, որ սերիական արտադրության կաթվածահար անող անհատական օգտագործման գազային սրվակ չկա, չի եղել եւ հավանաբար չի էլ լինի։ Այն, ինչ հորջորջվում է Paralitic, նյարդակաթվածահարող գազ, փոխառված է գաղտնի գործակալների մասին պատմող թրիլլերներից եւ իրականության հետ ոչ մի առնչություն չունի։ Ինքնապաշտպանական նպատակներով անհատական գազային սրվակները լիցքավորված են CS (օրթոքլորբենզոլմոլոնոներկնիտրիտ) կամ CN (քլորացետոֆենոն) կարգի քիմիկատներով։ Ներգործման հետեւանքները. արցունքաբեր էֆեկտ, աչքերի մռմռոց, լուսավախություն, լորձաթաղանթի խանձում։ Ընդհանրապես շուկան շատ հարուստ է տեսականիով։ Գերակշռում են լեհական եւ գերմանական արտադրության գազային սրվակները՝ խրթին թվերով ու ապրանքային կոդերով, որոնց նշանակությունն առ այսօր ոչ մի մասնագետ ի վիճակի չի եղել վերծանել։ Սրվակներում CS-ի խտացումը 20 տոկոսից չի գերազանցում եւ այդ թվերի հետ բացարձակ կապ չունի։

Սրվակի պիտանիությունը կարելի է որոշել նախ եւ առաջ ձայնի օգնությամբ. նոր եւ սարքին սրվակը թափ տալիս չի կլկլում։ Բացի այդ, պետք է ուշադրություն դարձնել սեղմման կոճակին եւ փականին. դրանք անպայման գործարանային զոդվածք պիտի ունենան։

Որոշ սրվակներ նախատեսված են կատաղած շներից պաշտպանվելու համար, ինչի մասին վկայում են սրվակի վրա զետեղված տեքստն ու խորհրդանիշը։ Այդպիսիք միանգամայն արդյունավետ են նաեւ չարագործներին վնասազերծելու համար. քիմիկատների հագեցվածությունը նման սրվակներում սովորական չափաքանակից բարձր է, քանի որ շներն առավել ցավադիմացկուն են։ Եվ հակառակը, խորհուրդ չի տրվում կատաղած շների դեմ կիրառել դրա համար չնախատեսված սովորական գազային աէրոզոլներ այն պարզ պատճառով, որ դրանով էլ ավելի կկատաղեցնեք գազազած շներին։

Մի հավատացեք նաեւ այն բանին, թե գազային աէրոզոլները հարձակվողի վրա ներգործում են 1,5-3 մետր տարածությունից։ Արդյունքի հասնելու համար պետք է գազն ուղիղ աչքերի մեջ ցայտեցնել ոչ ավելի, քան կես մետր հեռավորությունից։ Ընդ որում CN-ի եւ CS-ի ազդեցությունը վայրկենական չէ՝ անհրաժեշտ է 10-40 վայրկյան։ Հարբածի, գերգրգռվածի եւ թմրանյութ ընդունածի վրա աէրոզոլը պարզապես չի ազդում։

Որոշ սրվակներ դժվար մաքրվող ներկ են պարունակում։ Դրա միակ լրացուցիչ արդյունքը զուտ հոգեբանական է. հակառակորդը մի քանի օր ներկված ման կգա, ձեր վրեժի ծարավն արագ հագեցնելով։ Նույնը չի կարելի ասել ներկող գելով աէրոզոլների մասին. դրանք սովորական արցունքաբեր ազդեցություն չունեն եւ միայն գունավոր կպչուն փրփուրով են պատում հարձակվողի դեմքը։ Ընդ որում փրփուրն իսկույն չորանում է՝ ներկվածին բազմաթիվ տհաճ զգացողություններ պատճառելով։ Գելի գույնը համապատասխանում է սրվակի գույնին, գինը նույնն է, ինչ արցունքաբեր գազինը։

Ի դեպ, գազային սրվակներն այնքան էլ թանկ չեն։ Որպես կանոն, գինը որակով ու ազդեցությամբ պայմանավորված չէ։ Բոլորն էլ նույն գնի են։ Նկատի ունեցեք, որ գազային աէրոզոլների մեծ մասը կեղծված է։ Այնպես որ, գնելուց առաջ պահանջեք որակի սերտիֆիկատ։



Մասնագետների հավաստմամբ, ռուսական «Щит» «Кобра» «Скорпион» աէրոզոլներն անհամեմատ որակով են։ Դե, Ռուսաստանը զինագործական արվեստի մեծ ավանդույթներ ունի։ Ռուսական աէրոզոլներում CS-ի խտությունը, այլ երկրների արտադրանքի համեմատ, 30-40 տոկոսով բարձր է։

Այժմ վաճառվում են նաեւ արցունքաբերությունը չեզոքացնող միջոցներ։ Բայց վնասվելուց հետո անիմաստ է չեզոքացուցիչը փչել աչքերին։ Դրանք չեզոքացնում են միայն փակ տարածքներում կամ մաշկին փչված գազը եւ անփոխարինելի են գազային զենքով զինված թիկնապահների կամ պահակախմբի համար։

ՌՈԲ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՍԱԼՈՆԻԿ

Եվրամիությունը պայմաններ է թելադրում Բալկաններին

Եվրամիությունում Հունաստանի նախագահության վեցամսյա ժամկետն ավարտվում է հունիսի վերջին։ Իրաքի պատերազմի հետեւանքով Եվրոպայի եւ մասնավորապես Հունաստանի գերակայությունները աշխարհում փոքր-ինչ թուլացան։ Սալոնիկում անցկացվող ԵՄ գագաթաժողովի շրջանակներում հունիսի 21-ին ԵՄ-Բալկաններ հանդիպում կազմակերպելով՝ Հունաստանն ակնկալում է ամրապնդել իր հեղինակությունը եւ արդյունավետ ավարտել իր նախագահության ժամկետը։ Եթե հարեւան բալկանյան երկրների առջեւ Եվրամիությանն անդամակցելու հեռանկար բացվի, դա, անկասկած, կմեծացնի Հունաստանի դերը տարածաշրջանում։

Սակայն, ինչպես նշում է Ֆրանսպրեսի թղթակիցը, Հունաստանն ստիպված կլինի սահմանափակել իր հավակնությունները, քանի որ Եվրահանձնաժողովը չի շտապում ԵՄ դռները բացել բալկանյան երկրներ Ալբանիայի, Բոսնիա-Հերցեգովինայի, Խորվաթիայի, Մակեդոնիայի եւ Սերբիա-Չեռնոգորիայի առջեւ։

Պատճառները մի քանիսն են. տարածաշրջանում ժողովրդավարությունը դեռ խախուտ է եւ անկայուն, տարածված են կազմակերպված հանցագործությունները ու կաշառակերությունը, բարեփոխումները դանդաղ են իրականացվում, թույլ է պայքարը մարդկանց եւ ապրանքների ընդհատակյա առեւտրի դեմ։ Այս ամենը նկատի ունենալով, հիշյալ 5 երկրները կարող են ակնկալել միայն Եվրամիության օգնության ծավալների մեծացում։

Եվրահանձնաժողովի նախագահ Ռոմանո Պրոդին, այդուհանդերձ, հուսադրող խոսքեր է ասել, ընդգծելով, որ տարածաշրջանի 5 երկրները «ունեն Եվրամիությանն անդամակցելու իրական հեռանկար» եւ որ «Եվրոպայի միավորումն ավարտված չի կարելի համարել առանց այդ երկրների»։

Խորվաթիան վերջերս պաշտոնապես իր թեկնածությունն առաջադրել է Եվրամիությանն անդամակցելու համար։ «Ֆիգարո» թերթի տվյալներով, մինչեւ տարեվերջ նույնն է անելու նաեւ Մակեդոնիան։

Եվրամիությունն արդեն իսկ խոշոր ներդրումներ է արել արյունահեղ ազգամիջյան պատերազմներից բզկտված այդ տարածաշրջանում։ 1991 թվականից մինչեւ օրս այնտեղ զանազան ձեռնարկումների համար ծախսվել է 7 մլրդ եվրո։ 2000-2006 թթ. ընկած ժամանակամիջոցում նախատեսված է ծախսել 4.65 միլիարդ։ Հունաստանն առաջարկում է բալկանյան հիշյալ 5 երկրներին օգնելու նպատակով հատկացնել հավելյալ 900 մլն եվրո, բայց Եվրահանձնաժողովը խոստանում է 210 միլիոն։

«Ֆիգարոյի» տվյալներով, պաշտոնական Բրյուսելը հունիսի 21-ին բալկանյան 5 երկրներին առաջարկելու է «նոր, հարմար գործընկերություն»։ Այն մասնավորապես ենթադրում է «ազգային գործողության ծրագրեր»։ Խոսքը սահմանները վերահսկելու, մաֆիաների դեմ պայքարելու, դատական համակարգը բարեփոխելու, ժողովրդավարությունը խորացնելու, արդյունավետ հաստատություններ ստեղծելու, գաղթականների եւ ազգային փոքրամասնությունների խտրականություն թույլ չտալու մասին է։

Սպիտակ տունը կունենա նոր մամլո քարտուղար

ԱՄՆ վարչակազմի ներկայացուցիչները, իրենց անունները չնշելու պայմանով, ամերիկացի լրագրողներին հայտնել են, որ Սպիտակ տան նոր մամլո քարտուղարն է լինելու Սքոթ Մաքլելանը։ 35-ամյա Մաքլելանն այդ պաշտոնում կփոխարինի Արի Ֆլեյշերին, որը երկու շաբաթ առաջ հայտարարել էր պաշտոնը թողնելու մասին։

Ֆլեյշերի խոսքերով, ինքը «21 տարի զբաղվել է միայն քաղաքականությամբ եւ կառավարական աշխատանքով», իսկ հիմա ուզում է ավելի շատ ժամանակ հատկացնել կնոջը, քանի որ վերջերս է ամուսնացել։ Նախագահ Ջորջ Բուշն արդեն ընդունել է Ֆլեյշերի հրաժարականի դիմումը, հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը։

42-ամյա նյույորքցի Արի Ֆլեյշերը հայտարարել է, որ առաջիկա 18 ամիսներին ինքը կփորձի Բուշին օգնել վերընտրվելու նախագահի պաշտոնում, ապա կմեկնի տուն՝ Նյու Յորք։

Ինչ վերաբերում է նրա իրավահաջորդ Սքոթ Մաքլելանին, նա Ջորջ Բուշի շրջապատում աշխատում է արդեն 10 տարի։ Մինչեւ վերջերս Մաքլելանը զբաղեցնում էր Սպիտակ տան մամլո քարտուղարի տեղակալի պաշտոնը։

Պ. Ք.

Բելգիան չհամարձակվեց դատել Բուշին եւ Բլերին

Բելգիայի իշխանությունները հինգշաբթի օրը մերժել են ավելի վաղ պատերազմական ոճիրների համար ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշին եւ Մեծ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլերին ներկայացված մեղադրանքները։ Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ Բելգիայի արդարադատության նախարարը հայցերն ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում դրանք վերահասցեագրել է ամերիկյան եւ բրիտանական դատական իշխանություններին, որոնք էլ շրջափակել են դատաքննությունը։ Նման միջոցի ձեռնարկումը թույլատրվում է 1993 թ. օրենքի ուղղումներով, ըստ որի բելգիական դատարանները կարող են քննել որեւէ տեղում գործված պատերազմական ոճիրներին առնչվող հայցեր։

Ասոշիեյթեդ պրեսի տվյալներով, Գերմանիայի, Շվեյցարիայի եւ Բելգիայի քաղաքացիները դատական 3 հայց էին ներկայացրել՝ Իրաքում եւ Աֆղանստանում գործած պատերազմական ոճիրների մեջ մեղադրելով Բլերին, Բուշին, ինչպես նաեւ Ռամսֆելդին, Փաուելին, Ֆրենկսին, Էշքրոֆթին, Ռայսին եւ Վոլֆովիցին։ Հայցերը վերահասցեագրելով՝ Բելգիան հավանաբար ջանացել է չխորացնել լարված հարաբերությունները մեծ տերությունների հետ։

100 մլն լատինամերիկացիներ քարտագրված են... Վաշինգտոնում

Վերջին շաբաթներին մոտ 100 մլն լատինամերիկացիներ պարզել են, որ իրենց վերաբերյալ տվյալներ են քարտագրված ԱՄՆ որոշ գերատեսչություններում։ Այս սենսացիոն նյութը հրապարակած «Լիբերասիոն» թերթը գրում է, որ վերջին մեկուկես տարում ամերիկացի պաշտոնյաները գաղտնաբար տեղեկություններ են հավաքել միլիոնավոր մեքսիկացիների, կոլումբիացիների, արգենտինացիների, բրազիլացիների, նիկարագուացիների եւ այլոց վերաբերյալ։

Իրադրությունների կենտրոնում Ատլանտայի «Չոյս փոյնթ» ձեռնարկությունն է, որը 2001 թ. սեպտեմբերին ԱՄՆ դաշնային գործակալություններից մեկին կարեւոր տեղեկություններ է հանձնել հարավցիների վերաբերյալ։ Այժմ հայտնի է դարձել, որ տարեկան 1 մլն դոլարի դիմաց ձեռնարկությունը ԱՄՆ ներգաղթի ազգային ծառայությանը եւ արդարադատության նախարարությանը հանձնել է մասնավորապես մեքսիկացի 60 մլն ընտրողների ցանկը, նրանց վարորդական վկայականների տվյալները, հեռախոսահամարները, 31 մլն կոլումբիացիների արտաքին նկարագիրը, քաղաքացիական կացության տվյալները, անձնագրերի համարները եւ այլն։ Կոստառիկացիներին առնչվող տվյալները թարմացվել են ամեն ամիս։

Մեծ աղմուկ հանած այս գաղտնի ձեռնարկումը բացահայտել է ազատությունների պաշտպան «Էպիկ» ամերիկյան ընկերակցությունը, որին մինչ օրս չի հաջողվել պաշտոնական բացատրություն ստանալ հիշյալ տեղեկությունների օգտագործման վերաբերյալ։

ԱՄՆ կառավարությունը փորձում է վկայակոչել «ազգային պաշտպանության» վարկածը։ «Չոյս փոյնթի» պաշտոնական ներկայացուցիչը մեքսիկական թերթերից մեկին տված հարցազրույցում նշել է, թե գաղտնի տեղեկատվության նպատակն «առավել ապահով աշխարհի կերտումն է»։

Ի դեպ, ամերիկյան այդ ձեռնարկությունը տեղեկություններ է հայթայթել Կոլումբիայի բոլոր օդանավերի եւ ձեռնարկությունների, Բրազիլիայի վերազգային ընկերությունների աշխատակիցների կապերի, Մեքսիկայի խոշոր ձեռնարկատերերի վերաբերյալ։ «Չոյս փոյնթի» ղեկավարությունը հավաստիացնում է, թե տեղեկությունները ձեռք են բերվել «օրինական կարգով եւ պաշտոնական աղբյուրներից»։

«Լիբերասիոնը» նշում է, որ Արգենտինայի անձնական տվյալների պաշտպանության ազգային վարչությունը դատի է տվել «Չոյս փոյնթին»։ Միաժամանակ ֆիրման ստիպված է եղել Մեքսիկային վերադարձնել այն 5 լազերային սկավառակները, որոնց վրա գրանցված են մեքսիկացիների ընտրացուցակները։

Պ. Ք.

ՀԱՐՑԱԽՈՒՅԶ

Թուրքերի 83 տոկոսը բացասաբար է վերաբերվում ԱՄՆ-ին

Իսկ 71 տոկոսը նրան համարում է լուրջ սպառնալիք

Որքան Մ. Նահանգների արտաքին քաղաքականության մեջ պետքարտուղարության նկատմամբ աճում է Պենտագոնի կշիռը, եւ դա հետզհետե ագրեսիվ բնույթ է ստանում, այնքան իջնում է այդ պետության միջազգային վարկանիշը։ Ընդ որում այն երկրներում, որոնք ԱՄՆ-ի ավանդական դաշնակցի համարում ունեն։ Խոսքը տվյալ դեպքում Կանադայի, Ֆրանսիայի, Հարավային Կորեայի, Ինդոնեզիայի, Հորդանանի եւ արաբական մյուս երկրների մասին է։

«Ազգը» նախանցյալ համարում տեղեկացրեց, որ վերջին 2 ամիսներին աշխարհի 11 երկրներում BBC-ի պատվերով անցկացված հարցման մասնակիցների 57 տոկոսը բացասական վերաբերմունք է արտահայտել Ջորջ Բուշին։ Բացառությամբ իսրայելցիների եւ ավստրալացիների, 9 երկրների բնակիչները ընդգծել են, որ վախենում են ԱՄՆ-ից։ Ինչ վերաբերում է Վաշինգտոնի հակաահաբեկչական պատերազմին եւ մերձավորարեւելյան քաղաքականությանը, ապա դա արժանացել է միայն Ավստրալիայի, Իսրայելի եւ Մեծ Բրիտանիայի հավանությանը։

Թուրքական «Զաման» թերթն էլ հունիսի 5-ի համարում տեղեկացնում է ԱՄՆ սոցիոլոգիական ուսումնասիրության կենտրոններից Pew-ի Թուրքիայում անցկացրած հարցումների մասին։ Ի դեպ, այս կենտրոնը գլխավորում է երկրի նախորդ նախագահ Բիլ Քլինթոնի պետքարտուղար Մադլեն Օլբրայթը։ Հարցման արդյունքներով թուրքերի 83 տոկոսը բացասաբար է վերաբերվում ԱՄՆ-ին, իսկ 71-ը համոզված է, որ ԱՄՆ-ը ռազմական սպառնալիք է Թուրքիայի համար։

Եթե հարցման արդյունքներին մոտենանք այլ տեսանկյունից, ապա կստացվի, որ Թուրքիայում ԱՄՆ-ին դրական է վերաբերվում բնակչության ընդամենը 12 տոկոսը։ Այս ցուցանիշն անցյալ տարի եղել է 30, իսկ 2000 թ.՝ 52 տոկոս։ Ինչո՞վ բացատրել 3 տարվա կարճ ժամանակահատվածում Թուրքիայում ԱՄՆ-ի հեղինակության կտրուկ անկումը։ Այդ հարցի առնչությամբ «Զամանը» դիմում է նախկին դեսպան Շուքրյու Էլեքդաղին եւ եվրասիական ռազմավարական ուսումնասիրությունների հիմնադրամի նախագահ Մուր Օզդաղին։

Էլեքդաղը կասկածի տակ է դրել հարցման արդյունքները, ընդգծելով, որ դրանք իրականությունը չեն արտացոլում։ Նա դա բացատրել է հակաիրաքյան պատերազմի ավարտին ԱՄՆ-ի շուրջ ձեւավորված բացասական հասարակական կարծիքի ազդեցությամբ։ Մինչդեռ Օզդաղը միանգամայն բնական է համարել, ավելացնելով. «Մ. Նահանգներին չհաջողվեց ցույց տալ հակաիրաքյան պատերազմի օրինականությունը։ Այդ իսկ պատճառով Թուրքիայում առաջին անգամ այս աստիճանի հակաամերիկյան տրամադրություններ առաջացան։ Մարդիկ վախենում են, իսկ դա խթանում է նրանց հակազդեցությունը»։

Հարցումներն անցկացվել են ս. թ. մայիսի 2-8-ին՝ 1005 հոգու մասնակցությամբ։

Հ. Չ.

Սիրիա-Իրաք հարաբերություններին նվիրված նոր ուսումնասիրություն

«Արաբական երկրների միջպետական հարաբերությունների խնդիրն Արաբական Արեւելքի նորագույն պատմության ամենաարդիական հարցերից է»։ Նման պատճառաբանությամբ է արեւելագետ Նուբար Չալըմյանը ներկայացնում «Սիրիա-իրաքյան հարաբերություններ, 1961-1967 թթ.» վերնագրված իր աշխատության անհրաժեշտությունը։

2002-ին Երեւանում լույս տեսած ռուսերեն գրքույկը երեք գլխից է բաղկացած. «Սիրիա-իրաքյան քաղաքական, ռազմական եւ տնտեսական հարաբերությունները 1961-1963 թթ.», «Սիրիա-իրաքյան փոխհարաբերությունները երկու երկրներում Բաաս կուսակցության իշխանության շրջանում (1963-ի փետրվար-նոյեմբեր)», «Սիրիա-իրաքյան հարաբերությունները 1964-1967 թթ.»։ Գրքույկի վերջաբանում հեղինակը, որ իր թեկնածուական թեզը պաշտպանել է միջարաբական հարաբերությունների թեմայով, պարզաբանում է Սիրիայի եւ Իրաքի փոխհարաբերությունների՝ հենց 1961-67 թթ. ժամանակահատվածը քննության առնելու պատճառները։ «Սիրիա-իրաքյան փոխհարաբերությունները 1961-67 թթ. երկու երկրների միջպետական փոխգործակցության ամենաբարդ շրջաններից է, որ զարգացավ երեք փուլով»։ Հենց այդ փուլերն էլ Ն. Չալըմյանն առանձնացրել է գրքի երեք բաժիններում։

Երկու երկրների փոխգործակցության ներկայացումն սկսվում է 1961-ի սեպտեմբերի 28-ից, երբ Սիրիան դուրս եկավ Արաբական Միացյալ Հանրապետության կազմից եւ, փաստորեն, հանրապետության մյուս անդամ Եգիպտոսի ազդեցության գոտուց։

Բաաս կուսակցության իշխանության ժամանակաշրջանը քննող երկրորդ բաժնում Ն. Չալըմյանն ասում է. «Սա շատ կարեւոր շրջան է, քանզի իշխանական այդ կուսակցությունը խնդիր էր դրել ամրապնդել իր քաղաքական ու գաղափարական դիրքերը Սիրիայում եւ Իրաքում, տարածել իր ազդեցությունն արաբական մյուս երկրներում եւ կոնկրետ քայլեր ձեռնարկել արաբական աշխարհի միասնականության ապահովման ուղղությամբ»։

Երրորդ բաժնում Ն. Չալըմյանը ներկայացնում է երկու երկրների հարաբերությունները 1963-ի իրաքյան հեղափոխությունից հետո, երբ Բաասն այդ երկրում տապալվեց եւ վերջինիս հարաբերությունները Սիրիայի հետ կտրուկ սրվեցին։ Այս գլխում հեղինակը հասնում է մինչեւ 1967 թ.՝ «մինչեւ արաբական աշխարհի դեմ Իսրայելի ագրեսիային», երբ իրաքյան եւ սիրիական իշխանությունները դարձյալ սկսեցին համագործակցել, իրաքյան բանակն օգնության հասավ Սիրիային՝ Իսրայելին դիմակայելու համար։

Нубар ЧАЛЫМЯН
СИРИЙСКО
ИРАКСКИЕ

«Մերձավոր Արեւելքում բարդ քաղաքական իրավիճակի պայմաններում Սիրիայի եւ Իրաքի հարաբերությունների բարելավումը կենսական անհրաժեշտություն ունի եւ կարեւոր դեր՝ միջարաբական համերաշխության, իմպերիալիզմի, սիոնիզմի դեմ արաբական աշխարհի միասնական պայքարի, իսրայելական ագրեսիայի հետեւանքները վերացնելու եւ, ի վերջո, այդ տարածաշրջանում արդարացի ու կայուն խաղաղություն հաստատելու համար», եզրակացնում է Նուբար Չալըմյանը։ Գրքույկը հետաքրքրական փաստեր է պարունակում սիրիա-իրաքյան հարաբերությունների զարգացումների մասին։

ԼԻԼԻԹ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կինո

ԳՐԵԳՈՐԻ ՓԵՔ. «ԻՆՉ ԿԱՐՃ Է ԿՅԱՆՔԸ»

87 տարեկանում իր մահկանացուն կնքեց Հոլիվուդի հնաբնակներից մեկը՝ լեգենդար աստղ Գրեգորի Փեքը: Կարիերայի ծաղկուն տարիներին վայելչատես Փեքը առնական գեղեցկության ու արժանապատիվ կեցվածքի մարմնացումն էր, այնքան գրավիչ, որ հանդիսատեսի համակրանքը նրա կողմն էր նույնիսկ բացասական կերպարներ խաղալիս: Բայց հոլիվուդյան շլացուցիչ փայլը Գրեգորի Փեքի մեջ համատեղվում էր արտիստիզմի, անվիճելի դերասանական ձիրքի հետ: Նա հինգ անգամ ներկայացվել է Ամերիկյան կինոակադեմիայի մրցանակին եւ 1962-ին «Օսկարի» արժանացել՝ Հարփեր Լիի «Սարյակ մի սպանիր» նշանավոր վեպի էկրանացման մեջ Աթիկուս Ֆինչի դերակատարման համար: Մեր հանդիսատեսի հիշողության մեջ Փեքը մնացել է նաեւ «Հռոմեական արձակուրդ», «Կիլիմանջարոյի ձյուները», «Մաքքենայի ոսկին» կինոնկարներից: Վերջին դերը նա խաղաց 1989-ին Կաննի փառատոնում ցուցադրված «Ծեր գրինգոն» ֆիլմում. այստեղ Փեքը մարմնավորել է ամերիկացի հայտնի գրող Ամբրոզ Բիրսին, որը 71 տարեկանում հեռացավ Միացյալ Նահանգներից Մեքսիկական հեղափոխությանը մասնակցելու համար եւ անհետ կորավ 1913-ին: Գրեգորի Փեքը պատկանում էր այն ժամանակներին, երբ դերասանները պատկառանք էին ներշնչում եւ մասնակից էին հասարակական կյանքին: Նա եղել է Քաղցկեղի դեմ պայքարի ամերիկյան ընկերության նախագահը, Արվեստի ազգային խորհրդի անդամ, աջակցել Ամերիկյան կինոինստիտուտի ստեղծմանը, երիցս գլխավորել Ամերիկյան կինոակադեմիան: Փեքի ղեկավարությամբ է լուրջ ու հետեւողական ծրագիր դարձել կինոֆիլմերի հավաքման եւ պահպանման գործը: Հումանիտար ավանդի համար նրան շնորհվել է Ջին Հերշոլտի անվան մրցանակ: Կանանց անուրջների տղամարդը, որին ռեժիսոր Ջոն Հյուսթոնը կոչել է «հմայիչ բոհեմական», նվիրված ամուսին էր եւ չորս զավակների հայր: Լոս Անջելեսի նրա առանձնատունը լի է արվեստի գործերով, Ռենուարի, Լեժեի, Վյույարի կտավներով եւ ոչ թե ի ցույց դրված «Օսկարի» արձանիկներով ու այլ մրցանակներով: Փեքը հեռու էր ինքնասիրահարված, անձնապաշտ աստղի կերպարից, որ երկնաքարի պես անհասանելի է հասարակ մահկանացուների համար: Լրագրողներին նա միշտ զարմացրել է իր պարզությամբ ու անկեղծ շիտակությամբ: Ներկայացնում ենք «American Film» նյույորքյան հանդեսում Ռոն Հեյվերի հրապարակած հարցազրույցը դասական Հոլիվուդի վերջին աստղերից մեկի հետ:

– Որո՞նք են ձեր առաջին հուշերը կինոյի մասին:

– Ծնողներս ամուսնալուծված էին, եւ ես ապրում էի տատիս հետ, նրա փայտե տնակում: Շուն ունեի, հեծանիվ ու շատ երջանիկ էի: Շաբաթը երեք-չորս անգամ գնում էինք կինո: Սիրում էի Հութ Գիբսոնին ու Թոմ Միքսին, իսկ Ռին Թին Թին շան համար խելքս գնում էր: Բայց մինչեւ օրս հիշում եմ նաեւ Լոն Չեյնիին «Օպերայի ուրվականը» ֆիլմում. նրան նայելիս փշաքաղվում էի, մազերս բիզ-բիզ էին կանգնում: Մահու չափ վախենում էի նրա անճոռնի դեմքից: Կարծեմ յոթ տարեկան էի, բայց այդ ֆիլմը խոր տպավորություն է թողել ինձ վրա: Տասնամյակներ են անցել, մինչդեռ «Օպերայի ուրվականը» մնացել է դրոշմված հիշողությանս մեջ:

– Հնչյուն ֆիլմերն է՞լ են ձեզ վրա այդպիսի տպավորություն գործել:

– Այն ժամանակ խելքահան էինք լինում դրանց համար: 1927-ին ծնողներս ինձ Լոս Անջելեսի ռազմական ուսումնարան ուղարկեցին: Կիրակի օրերը տրամվայով գնում էինք քաղաքի կենտրոն եւ մի ֆիլմը մյուսի հետեւից նայում: Իսկական թատրոնում երբեք չէի եղել, եւ ինձ համար հայտնություն էր մեծ դերասանների տեսնելը, որոնք այնքան գեղեցիկ էին խոսում՝ խաղալով եւ դրամաներում, եւ կատակերգությունների մեջ, եւ վեսթերններում, եւ անգամ արկածային ժապավեններում:

– Ի՞նչը ստիպեց, որ դերասան դառնաք:

– Բերքլիում անգլերեն էի ուսանում, բայց ինձ հետաքրքրում էր միայն թիավարությունը: Մի օր, երբ դուրս էի գալիս քոլեջի բակից, ինձ մոտեցավ մի մարդ ու ասաց, թե փոքրիկ ուսումնական թատրոնի ռեժիսոր է, եւ իրեն բարձրահասակ դերասան է պետք «Մոբի Դիկի» բեմականացման համար: Չգիտեմ ինչու համաձայնեցի: Ուղղակի ոչ մի բանից երկյուղ չունեի ու մտածեցի, որ զվարճալի կլինի: Բան դուրս չեկավ, բայց վերջիվերջո, քոլեջում սովորելուս վերջին տարին մասնակցեցի հինգ ներկայացման: Սկսեցի մի քիչ ավելի լավ խաղալ, թեեւ դեռ այնքան էլ լավ չէր, բայց ավարտելուց հետո այդ միտքն արդեն գրավել էր ինձ, եւ մեկնեցի ուղիղ Նյու Յորք, որտեղ փորձեցի մի կերպ թատրոն թափանցել: Ինչ գործ պատահեր՝ անում էի, աշխատանքի անցա համաշխարհային ցուցահանդեսում, մի կարճ ժամանակ էլ ֆոտոմոդել էի: Հետո «Նեյբերհուդ Փլեյհաուսի» կրթաթոշակ ստացա, այնտեղ դասավանդում էր Սանֆորդ Մեյսները, որը «Գրուփ» թատրոնից էր: Պատահում էր, որ կենտրոնական զբոսայգում էի գիշերում, երբ գրպանս դատարկ էր, իսկ ունեցած-չունեցածս թողնում էի կենտրոնական կայարանի պահոցներից մեկում: Բայց այդ հսկայական քաղաքում բախտաբերը իսկական արկած էր:

– Ո՞րն եք համարում ձեր առաջին ձեռքբերումը:

– Անդրանիկ բեմելս Բրոդվեյում վճռորոշ պահ էր իմ կարիերայում: Կամ պետք է հաջողության հասնեի, կամ էլ ամեն ինչից հրաժարվեի: Պիեսը Էմլին Ուիլյամսի «Վաղորդյան աստղն» էր, ես խաղում էի գլխավոր դերը: 24–25 տարեկան էի: Սարսափելի բեմական վախով էի համակվել, մտածում էի, թե քննադատները, ինձ ուղղակի գլխատելով, ճաշ կեփեն: Բայց ի վերջո, ինձ հաջողվեց վախս հաղթահարել, այնքան, որ իմ մասին նույնիսկ մի քանի սիրալիր խոսք գրեցին: Առաջին փորձությունն անցա ու սկսեցի մտածել. իսկ ինչու՞ այս մասնագիտությունը չընտրեմ: Իմ կարծիքով, ամեն մի դերասան պետք է անցնի նման ճգնաժամով՝ բեմ ելնելու, լարախաղացի պես ձգված պարանի վրայով անցնելու, ինքն իրեն ստուգելու համար:

– Որո՞նք են ձեր առաջին տպավորությունները Հոլիվուդից:

– Ամեն ինչ շատ հետաքրքիր էր: Հիշում եմ, գնացի «Փարամաունթի» նկարահանման հրապարակներից մեկն ու սկսեցի հմայվածի պես նայել, թե մարդիկ ինչպես էին աշխատում: Կինոյում նկարահանվելու ցանկությամբ լցվեցի: Քեյսի Ռոբինսոնը հետաքրքրական սցենար ուներ: Դրա հիման վրա էլ նկարահանվեց «Փառքի օրերը»՝ առաջին ֆիլմս: Իսկ հետո հայտնվեց Դարիլ Զանուքը «Թագավորության բանալիներով»՝ որը մեծ հաջողության արժանացած վեպ էր: Դերը սքանչելի էր, բայց դա ստանալու համար պետք է համաձայնեի խաղալ նրա եւս չորս ֆիլմում: Ես չդիմադրեցի: Զանուքը նայեց աչքերիս ու ասաց. «Ես երբեք չեմ ստիպի, որ խաղաս քեզ դուր չեկող ֆիլմում: Հավատա ինձ»: Ես հավատացի, եւ նա իր խոսքի տերը եղավ: Այդ ընթացքում Սելզնիքը հետաքրքրություն ցուցաբերեց եւ երեք պայմանագիր կնքեց նրա հետ: Քեյսի Ռոբինսոնի հետ նկարահանեցինք երկրորդ ֆիլմը՝ «Մաքոմբերի գործը»:

Աստղային տարիներին



1989-ին

– Դերասաններից շատերն ուրախացան, երբ մեծ կինոստուդիաների համակարգը փլվեց, բայց դուք ձեզ լա՞վ էիք զգում այդ համակարգում:

– Շատ ոգեւորիչ էր աշխատել այնպիսի մարդկանց հետ, ովքեր այդքան սիրում էին կինոն, թեեւ ամեն մեկը՝ յուրովի. ես նկատի ունեմ Ջեք Ուորներին, Սելզնիքին, Զանուքին, Հարի Քոնին: Նրանք տարբեր մոտեցումներ ունեին, բայց բոլորն էլ նույն անկեղծ սիրով ցանկանում էին կինո նկարել: Դա շատ հաճելի էր: Եվ սովորաբար, ինձ դերեր էին տալիս հիանալի ֆիլմերում: Ընդ որում՝ սցենարները ես չէի ընտրում: Իրենք էին ինձ առաջարկում:

– Մի հարցազրույցում դուք ասել եք, թե ափսոսում եք, որ Հիչքոքի հետ աշխատել եք միայն նրա վատ շրջանի ֆիլմերում: Ինչո՞ւ:

– Հիչքոքը շատ ուշադիր էր իմ նկատմամբ ու բարեկամաբար տրամադրված, բայց ինձ թվում է՝ չունեմ այն թեթեւությունը, որ նրան դուր էր գալիս դերասանի մեջ: Հիչքոքին հետաքրքրում էր ոչ թե զգացմունքների խորությունը, այլ արտաքին ձեւը, եւ նրա ֆիլմերի մեծ մասը, վերջին հաշվով, խելքով կառուցված գլուխկոտրուկներ են: Նա չէր պահանջում խաղալ Ստանիսլավսկու մեթոդով, ինչպես ինձ սովորեցրել էր Սանֆորդ Մեյսները: Հիչքոքի համար Քերի Գրանթը կատարյալ դերասան էր, քանի որ կարողանում էր արտահայտվել մարմնի լեզվով: Իսկ Հիչքոքին հենց դա էր դուր գալիս: Ես տանջվում էի իրերի էության մեջ թափանցելու, սքողված ճշմարտությունը պարզելու համար եւ փորձում էի հասնել այն ամենին, ինչ պահված է արտաքինի տակ: Իսկ Հիչքոքի նախընտրած դերասանի տեսակը դա չէր:

– Ո՞ր ռեժիսորների հետ էիք ամենից շատ սիրում աշխատել:

– Էլիա Կազանը իսկական ռեժիսոր է, որ հարգանքով է վերաբերվում դերասանին: Այդպիսին էր եւ Ուիլյամ Ուայլերը: Ռոբերտ Մալիգանը՝ նույնպես: Իմ լավագույն դերերից մի քանիսը խաղացել եմ Հենրի Քինգի ֆիլմերում, որովհետեւ մենք ուղղակի փոխադարձ համակրանք ունեինք: Հենրին պինդ տղա էր, սրտաբաց, ուրախ, տեխնիկական հարցերից շատ լավ էր գլուխ հանում: Նա սովորություն չուներ ինձ ճշգրիտ ցուցումներ տալու: Ուղղակի պատմում էր, թե ինչ կառաջարկեի, իսկ հետո փոքրիկ շտկումներ էր անում: Ամենից շատ երեւի նրա ֆիլմերում եմ նկարահանվել: Նույնը կասեի եւ մյուսների՝ Ուիլի Ուայլերի, Բոբ Մալիգանի եւ Էլիա Կազանի մասին. կարեւորն այն է, որ ներդաշնակություն լինի քո եւ ռեժիսորի միջեւ, որպեսզի կարողանաս նրան վստահել, երբ կանգնի կինոխցիկի հետեւում:

– Շատերը ձեր անունը կապում են «Սարյակ մի սպանիր» ֆիլմի հերոս Աթիկուս Ֆինչի հետ: Ձեր էության ո՞ր մասն եք դրել այդ դերի մեջ:

– Դա հոյակապ դեր էր, եւ իմ միակ մտավախությունն այն էր, որ գլուխ չեմ բերի: Դրա համար էլ այդ հերոսի մեջ դրել եմ այն ամենը, ինչ ունեի՝ զգացմունքներս եւ կյանքիս 46 տարիների ընթացքում իմ հասկացածը ընտանիքի, հայրերի ու զավակների մասին, ինչպես նաեւ վերաբերմունքս ռասայական խտրականության, անհավասարության ու անարդարության նկատմամբ: Մանկան քնքուշ հոգուն հասու լինելու համար վերհիշել եմ սեփական մանկությունս, մտաբերել հորս: Ինչ վերաբերում է ֆիլմի սոցիալական կողմին, ես սեփական կայուն համոզմունքներս ունեմ, որ, բնականաբար, արտահայտել եմ ֆիլմում:

– Ինչպիսի՞ն էր ձեր արձագանքը, երբ իմացաք, որ Ամերիկյան կինոինստիտուտը ձեզ մրցանակ է շնորհել ստեղծագործական նվաճումների համար:

– Մնացի զարմացած: Երբեք չէի կարծի, թե ինձ նման մրցանակ կտան: Այդ մրցանակը ես կապում էի Ջոն Ֆորդի, Բիլի Ուայլդերի, Բեթի Դեյվիսի, Հենրի Ֆոնդայի անունների հետ: Բայց հպարտ եմ, որ ինձ էլ բաժին հասավ: Դեմ չեմ, եթե ինձ գնահատում են լավագույն դերերիս հիման վրա: Եվ գոհ եմ, որ իմ մասնակցությամբ նկարահանված որոշ ֆիլմեր բռնել են ժամանակի քննությունը: Դա նշանակում է, որ չեն կորցրել իրենց նշանակությունը, իմաստը, դեռ կարող են հուզել մարդկանց, վեհացնել նրանց, ժամանց պարգեւել: Վերջերս մի կույտ նամակ ստացա դպրոցականներից, որոնք դիտել էին «Սարյակ մի սպանիր» ֆիլմը: Այդ կինոնկարը շատ բան է ասում: Երիտասարդները արժեքավոր բաներ են քաղում ֆիլմից, որը դառնում է նրանց կյանքի մի մասը:

Երեւի այլեւս չնկարահանվեմ կինոյում: «Ծեր գրինգոն» ֆիլմում շատ բան եմ ներդրել ինձնից: Բայց չէի ուզենա այնպիսի բան անել, որ հետո անհարմար լիներ: Ուղղակի այլեւս չեմ աշխատի: Կնոջս հետ կճանապարհորդեմ: Սիրում եմ կյանքը: Ինձ չեն տանջում ոչ անբավարարվածությունը, ոչ չիրականացած հավակնությունները, ոչ էլ հիասթափությունները: Երեւի պիտի տանջեին, բայց ես ուղղակի այդ ամենը մոտ չեմ թողնում ինձ: Գիտակցում եմ, թե ինչ կարճ է կյանքը եւ չեմ ուզում ժամանակ վատնել ինքնամեղադրանքի կամ ափսոսանքի վրա: Թերություններն ու անհաջողությունները համարում եմ կյանքի եւ այն մասնագիտության մի մասը, որը սրտովս է:

ԱՐԺԵ ԴԻՏԵԼ

23 հունիսի, 23.40 Երեւան

■ **«Յո երթաս»★**: Ռեժիսոր՝ Եժի Կավալերովիչ: Դերերում. Պավել Դելոնգ, Բոգուսլավ Լինդա, Մագդալենա Մելցաժ: Լեհաստան, 2002:

Պատմական դրամա Քրիստոսի առաջին հետեւորդների հալածանքների մասին, ըստ Հ. Սենկեւիչի դասական վեպի:

24 հունիսի, 23.30 Արմեն-Ակոբ

■ **«Նա չքնաղ է»★★**: Ռեժիսոր՝ Նիք Կասավետիս: Դերերում. Շոն Փեն, Ռոբին Ռայթ - Փեն, Ջոն Տրավոլտա: ԱՄՆ, 1997:

Խենթ սիրո պատմություն, որի գլխավոր դերակատարման համար Շ. Փենն արժանացել է Կաննի փառատոնի մրցանակին:

24 հունիսի, 00.20 Հ1

■ **«Չալիկ շուն, որ վազում ես ծովեզրին»★★★**: Ռեժիսոր՝ Կարեն Գեւորգյան: Դերերում. Բոյարտո Դամբաեւ, Ալեքսանդր Սախկով: ԽՍՀՄ-Գերմանիա, 1991:

Չ. Այթմատովի համանուն վիպակի էկրանացումը՝ հյուսիսային փոքրիկ ժողովրդի՝ նիվխերի մասին, արժանացել է Մոսկվայի կինոփառատոնի Մեծ մրցանակին:

26 հունիսի 22.00 Շողակաթ

■ **«Ուժասպառ ձիերին սպանում են, այնպե՞ս չէ»★★★**: Ռեժիսոր՝ Սիդնի Փոլաք: Դերերում. Ջեյն Ֆոնդա, Մայքլ Սարազին, Սուզաննա Յորք: ԱՄՆ, 1969:

Գլորիան 30-ականների Ամերիկայում կյանքի հատակն ընկած շատերի նման մասնակից է դառնում անվերջանալի պարային մարաթոնի՝ հաղթելու խաբուսիկ հույսով:

27 հունիսի, 21.05 Արմեն-Ակոբ

■ **«Էվիտա»★★**: Ռեժիսոր՝ Ալան Փարքեր: Դերերում. Մադոննա, Վինսենթ Փրայս, Անտոնիո Բանդերաս: ԱՄՆ, 1996:

Մյուզիքլ, որի հերոսուհին Արգենտինայի երբեմնի բռնատեր Պերոնի նշանավոր տիկինն է:

27 հունիսի, 22.20 Շողակաթ

■ **«Ստալկեր»★★★**: Ռեժիսոր՝ Անդրեյ Տարկովսկի: Դերերում. Ալեքսանդր Կայդանովսկի, Անատոլի Սոլոնիցին, Ալիսա Ֆրեյնդլիխ: ԽՍՀՄ, 1980:

Խորհրդավոր ուղեւորություն դեպի այն տարածքը, ուր անիմանալի տիեզերական մարմին է ներխուժել:

28 հունիսի, 23.05 Կենտրոն

■ **«Ֆրիդա»★**: Ռեժիսոր՝ Ջուլի Թեյմոր: Դերերում. Սալմա Հայեկ, Ալֆրեդ Մոլինա, Ջեֆրի Ռաշ: ԱՄՆ, 2002:

Կենսագրական ֆիլմ մեքսիկացի նշանավոր նկարչուհի Ֆրիդա Կալոյի դրամատիկ կյանքի մասին:

28 հունիսի, 02.05 Երեւան

■ **«Ցերեկային գեղեցկուհին»★★★**: Ռեժիսոր՝ Լուիս Բունյուել: Դերերում. Կատրին Դընյով, Ժան Սորել, Պիեռ Կլեմանտի: Ֆրանսիա, 1966:

Բարեկեցիկ տիկինն ապրում է երկակի կյանքով՝ ընտանեկան կյանքի տաղտուկը փարատելով ծածուկ մարմնավաճառությամբ:

29 հունիսի, 21.45 Հ1

■ **«Կաբիրիայի գիշերները»★★★**: Ռեժիսոր՝ Ֆեդերիկո Ֆելլինի: Դերերում. Ջուլիետա Մազինա, Ֆրանսուա Պերյե: Իտալիա, 1957:

Ոսկի սրտի տեր պոռնիկի՝ Կաբիրիայի տրտառուչ ոդիսականը երկու «Օսկար» է բերել ֆիլմին եւ գլխավոր դերակատարուհուն:

29 հունիսի, 23.00 Կենտրոն

■ **«Ժամեր»★★**: Ռեժիսոր՝ Սթիվն Դալդրի: Դերերում. Նիկոլ Քիդման, Մերիլ Սթրիփ, Ջուլիան Մուր, Էդ Հարիս: ԱՄՆ, 2002:

Անգլիացի գրող, մոդեռնիզմի «կնքամայր» Վիրջինիա Վուլֆի դերակատարման համար Ն. Քիդմանն այս տարի վաստակեց «Օսկար»:

29 հունիսի, 23.20 Երեւան

■ **«Անդառնալիություն»★★**: Ռեժիսոր՝ Գասպար Նոե: Դերերում. Վենսան Կասել, Մոնիկա Բելուչչի, Ալբեր Դյուպոնտել: Ֆրանսիա, 2002:

Դաժան բռնաբարության եւ հատուցման ջղագրգիռ պատմություն, որ շարադրված է դեպքերի հակառակ հաջորդականությամբ՝ վերջից դեպի սկիզբ:

29 հունիսի, 01.30 1-ый канал

■ **«Բուչ Քեսիդին եւ Սանդենս Քիդը»★★**: Ռեժիսոր՝ Ջորջ Ռոյ Հիլ: Դերերում. Փոլ Նյուման, Ռոբերտ Ռեդֆորդ: ԱՄՆ, 1969:

Վեսթերն Վայրի Արեւմուտքի լեգենդար հերոսների մասին:

Էջը պատրաստեց

ԱԶԳ

Մարզական

«Կոտայքին» լուրջ քննություն է սպասում

Այսօր կտրվի Ինտերտոտոյի գավաթի խաղարկության մեկնարկը: Առաջին փուլում Աբովյանի «Կոտայքը» չեխական Բռնո քաղաքում ուժերը կչափի տեղի համանուն թիմի հետ: «Կոտայքը» մրցավայր է մեկնել հունիսի 19-ին: Կազմն ուժեղացնելու նպատակով «Կոտայքում» ընդգրկվել են փյունիկցիներ Վալերի Ալեքսանյանը, Տիգրան Դավթյանը, Լեւոն Փաչաջյանը եւ «Վաղարշապատի» պաշտպան Արտավազդ Մկրտչյանը: «Կոտայքի» մրցակիցը վերջերս ավարտված երկրի առաջնությունում 16 թիմերի մրցավեճում գրավել է 9-րդ տեղը: «Բռնոն» առաջնության 30 հանդիպումներում տարել է 10 հաղթանակ, 9 խաղ ավարտել է ոչ-ոքի, 11-ում պարտվել է: Խփած եւ բաց թողած գնդակների տարբերությունն է 35-31: Թիմի լավագույն ռմբարկուն Դոշեկն է, որը խփել է 10 գնդակ: Դա առաջնության լավագույն ռմբարկուների մեջ 3-րդ ցուցանիշն է: Ամենաարդյունավետ ֆուտբոլիստը 8-րդ տեղը զբաղեցրած «Սինոտի» հարձակվող Կովալիկն է, որի հաշվին գրանցված է 16 գնդակ: Ընդհանրապես, Չեխիայի առաջնությունն աչքի չի ընկնում բարձր արդյունավետությամբ: Չեմպիոնը՝ «Սպարտան», 30 հանդիպումներում խփել է 51 գնդակ: Դա երկրորդ ցուցանիշն է «Սլավիայից» հետո (65 գոլ):

«Բռնոն» եվրոպական չափանիշներով միջակ թիմ է: Չեխիայի հնագույն ակումբներից մեկն այս տարի նշում է հիմնադրման 90-ամյակը: Ազգային առաջնությունում թիմի ամենամեծ նվաճումը 1978 թ. չեմպիոնի կոչմանն արժանանալն էր: Իսկ եվրոպական գավաթների մրցաշարերում լավագույն արդյունքը թիմը ցույց է տվել 1980 թ.՝ հանդես գալով ՈՒԵՖԱ-ի գավաթի քառորդ եզրափակչում: «Կոտայքը» 2-րդ անգամ է մասնակցում եվրագավաթների խաղարկությանը: Աբովյանցիներն իրենց նորամուտը նշել են 1996/97 թթ. գավաթակիրների գավաթի խաղարկությունում: Նախնական փուլում հայ ֆուտբոլիստները սեփական հարկի տակ 1-0 հաշվով հաղթեցին Կիպրոսի ԱԵԿ-ին՝ շնորհիվ Հենրիկ Բերբերյանի խփած միակ գոլի: Սակայն պատասխան խաղում «Կոտայքը» 0-5 հաշվով ջախջախիչ պարտություն կրեց եւ դուրս մնաց մրցաշարից: Հետաքրքրական է, որ այդ խաղերի մասնակիցներից այսօր «Կոտայքում» են դարպասապահ Էդուարդ Երիցյանն ու պաշտպան Ալբերտ Աֆյանը:

Եվրագավաթներում «Կոտայքի» միակ գոլի հեղինակ Հենրիկ Բերբերյանը

Հայաստանի թիմերն Ինտերտոտոյի գավաթի մրցաշարերին մասնակցում են 1998 թ.: Առայժմ միայն «Արարատին» է հաջողվել մեկ անգամ հաղթահարել առաջին փուլի արգելքը: Նախորդ 5 խաղարկություններում Հայաստանի թիմերն ընդհանուր առմամբ անցկացրել են 12 հանդիպում, որից 3-ում հաղթել են, 2-ն ավարտել են ոչ-ոքի, 7-ում պարտվել են: Հայ ֆուտբոլիստները խփել են 12 գնդակ, սեփական դարպասը բաց են թողել 25-ը:

Ահա անցկացված հանդիպումների համառոտ վիճակագրությունը:

1998 թ. «Տորպեդո» Քութայիս-«Երեբունի» ՀՄՄ 6-0:
Մեգրելաձե (2, 27), Վաչիբերիձե (29), Ջանաշիա (42, 82, 84):
«Երեբունի» ՀՄՄ-«Տորպեդո» Քութայիս՝ 1-1
Գեղամ Հովհաննիսյան (23), Խուջաձե (30):
1999 թ. «Բաքեու» Ռումինիա»-«Արարատ»՝ 0-1
Հովհաննես Անտոնյան (70):
«Արարատ»-«Բաքեու» Ռումինիա՝ 1-0
Հովակիմ Հովակիմյան (68):
«Արարատ»-«Սենտ Տրյուդեն» Բելգիա՝ 0-2
Ֆիերու (18), Դիերիքս (41):
«Սենտ Տրյուդեն» Բելգիա-«Արարատ»՝ 3-1
Տեպերու (3՝ 11 մ), Մերբենս (45), Իսայաշ (56), Էմիլ Մեսրոպյան (63):
2000 թ. «Արաքս»-«Սիգմա» Չեխիա՝ 1-2
Վլչեկ (1, 38), Շիրակ Սառիկյան (75):
«Սիգմա»-«Արաքս»՝ 1-0
Վլչեկ (58):
2001 թ. «Լոմբարդ» Հունգարիա-«Շիրակ»՝ 2-3
Պեկովիչ (7), Հենրիկ Բատիկյան (13), Արարատ Հարությունյան (74, 84՝ 11 մ), Բայկուշա (90):
«Շիրակ»-«Լոմբարդ»՝ 1-3
Շաֆրանեկ (41), Վեբեր (44), Արտյոմ Հակոբյան (68), Պեկովիչ (85):
2002 թ. «Սանտա Կլարա» Պորտուգալիա-«Շիրակ»՝ 2-0
Ժոաո Պեդրո (57), Բրանդաո (83):
«Շիրակ»-«Սանտա Կլարա» Պորտուգալիա՝ 3-3
Ժոաո Պեդրո (29, 34, 46), Արարատ Հարությունյան (36, 75՝ 11 մ), Կարեն Ալեքսանյան (90):

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԵՈՆ

Սարգիս Հովսեփյանը տրանսֆերի կհանվի

Ամենայն հավանականությամբ առաջին շրջանից հետո տրանսֆերի հանվելիք «Զենիթի» երեք ֆուտբոլիստների թվում կլինի նաեւ ՀՀ հավաքականի պաշտպան Սարգիս Հովսեփյանը: Այդ ցանկը կհրապարակվի հունիսի 30-ին՝ ակումբի տնօրենների խորհրդի նիստի օրը: Հովսեփյանը երեքշաբթի երեկոյան տեղեկանալով, որ չի ընդգրկվելու «Տորպեդո-Մետալուրգի» հետ խաղին նախապատրաստվող «Զենիթի» հիմնական կազմում՝ պատճառաբանելով վնասվածքը, լքել էր մարզաքաղաքը: Ըստ որոշ տեղեկությունների, Սարգիս Հովսեփյանը հրավեր ունի Մոսկվայի «Տորպեդոյից»: Տրանսֆերի կարող են հանվել նաեւ թիմի 27-ամյա ավագ Ալեքսեյ Իգոնինը եւ 24-ամյա կիսապաշտպան Սերգեյ Օսիպովը, որը ներկայումս խաղում է փոխարինողների կազմում: Հնարավոր է նա տեղափոխվի «Տորպեդո-Մետալուրգ»:

Հարություն Վարդանյանը կխաղա «Սերվետում»

Ֆուտբոլի ՀՀ հավաքականի եւ շվեյցարական «Յանգ բոյզի» կենտրոնական պաշտպան Հարություն Վարդանյանը նոր մրցաշրջանում հանդես կգա «Սերվետում»: 33-ամյա ֆուտբոլիստը մեկ տարով պայմանագիր է կնքել շվեյցարական ակումբի հետ, որի բաժնետերերից է նաեւ Երեւանի «Արարատի» հովանավոր Վարդան Սրմաքեշը: Վարդանյանին «Սերվետ» էր հրավիրել «Յանգ բոյզի» նախկին մարզիչը, որն այժմ գլխավորում է թիմը:

ՎԵՐՋԱՊԵՍ...

Հակոբյանն ուշքի է գալիս

Ֆրանսիայում ընթացող շախմատի մրցաշարի 6-րդ տուրում Վլադիմիր Հակոբյանը վերջապես գտավ իր խաղը: Հայ գրոսմայստերը սպիտակներով հաղթեց առաջատարների խմբում գտնվող Բորիս Գելֆանդին: Ճիշտ է, անդրանիկ հաղթանակը ոչնչով չազդեց Հակոբյանի մրցաշարային անմխիթար վիճակի վրա: Նա 1,5 միավորով եզրափակում է աղյուսակը: 6-րդ տուրում նոր հաղթանակ տոնեց Եվգենի Բարեեւը՝ այս անգամ պարտության մատնելով Ֆրեսինեին: Ռուս գրոսմայստերը հասել է գերազանց արդյունքի (5 միավոր): Նրանից կես միավոր պակաս է վաստակել Մայքլ Ադամսը, որը պարտության մատնեց Ռաջաբովին: 4 միավորով 3-րդ տեղում ընթացող Պոլգարը ոչ-ոքի խաղաց Կորչնոյի հետ: Խաղաղ ելք ունեցավ նաեւ Լոթյե-Բաուեր պարտիան:

Բլատերը խոստացել է օգնել իսրայելցիներին

Մասնակցելով Իսրայելի ֆուտբոլի ֆեդերացիայի հիմնադրման 75-ամյակին նվիրված տոնակատարությանը, ՖԻՖԱ-ի նախագահ Զեպ Բլատերը խոստացել է ավետյաց երկրին վերադարձնել մեծ ֆուտբոլը: Ինչպես հայտնի է, տարածաշրջանի անկայուն քաղաքական իրավիճակի հետեւանքով 2002 թ. մարտից երկրի ակումբներն ու հավաքականը սեփական հարկի տակ նախատեսված միջազգային հանդիպումներն անց են կացնում չեզոք դաշտերում: Բլատերը խոստացել է օգնել իսրայելցիներին, որպեսզի ՈՒԵՖԱ-ն թույլատրի հաջորդ տարվանից Իսրայելում անցկացնել ազգային հավաքականի եւ եվրոպական գավաթների խաղարկության հանդիպումները:

«Բոկա Խունիորսը» եզրափակչում

Լիբերտադորեսի գավաթի եզրափակչում բրազիլական «Սանտոսի» մրցակիցը կլինի արգենտինական «Բոկա Խունիորսը»: Դա հայտնի դարձավ կոլումբիական «Ամերիկա Կոլի» ակումբի հետ անցկացված կիսաեզրափակչի պատասխան խաղից հետո, որում արգենտինացիները հաղթեցին 4-0 հաշվով:

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի թիմերի մրցակիցները հայտնի են

Երեկ շվեյցարական Նիոն քաղաքում տեղի ունեցավ չեմպիոնների լիգայի որակավորման առաջին ու երկրորդ փուլերի եւ ՈՒԵՖԱ-ի գավաթի որակավորման փուլի մասնակիցների վիճակահանությունը: Չեմպիոնների լիգայի որակավորման առաջին փուլում «Փյունիկը» մրցելու է Իսլանդիայի չեմպիոն «Ռեյկյավիկի» հետ: Առաջին հանդիպումը կայանալու է հուլիսի 16-ին Երեւանում, պատասխան խաղը՝ մեկ շաբաթ անց, Ռեյկյավիկում: Հաջողության դեպքում հաջորդ փուլում «Փյունիկը» կհանդիպի Սոֆիայի ԲԿՄԱ-ի հետ: Առաջին հանդիպումում ԲԿՄԱ-ն կհյուրընկալվի մրցակցին: Երկրորդ փուլի հանդիպումները նախատեսված են հուլիսի 30-ին եւ օգոստոսի 6-ին:

ՈՒԵՖԱ-ի գավաթի որակավորման փուլի մասնակից թիմերը, համաձայն վարկանիշների, նախապես բաժանվել էին 10 խմբերի: «Բանանցն» ընդգրկվել էր «B» խմբում, որտեղ նրա հնարավոր մրցակիցը կարող էր լինել Թել Ավիվի «Հապոելը», Կիպրոսի «Անորտոսիսը», Շվեդիայի «Մալմյոն» կամ Դանիայի ներկայացուցիչը: Վիճակահանությունն ընտրեց հայ ֆուտբոլասերներին արդեն քաջածանոթ «Հապոելին»: «J» խմբում ընդգրկված «Շիրակին» վիճակահանությունը բաժին հանեց Դանիայի ներկայացուցչին: Հնարավոր մրցակիցների թվում էին ֆրանսիական «Լանսը», նորվեգական «Լյունը», Սլովենիայի «Օլիմպիան», Սլովակիայի «Պետրժալկան»: Օգոստոսի 14-ին «Բանանցը» կխաղա սեփական հարկի տակ, իսկ «Շիրակը» կհյուրընկալվի մրցակցին: Պատասխան հանդիպումները կկայանան երկու շաբաթ անց:

Եվրոպական գավաթների խաղարկություններում մեր թիմերի ներկայիս մրցակիցներից հայ ֆուտբոլիստները նախկինում հանդիպել էին միայն «Հապոելի» հետ: 1999 թ.-ին ՈՒԵՖԱ-ի գավաթի մրցաշարում «Երեւանը» մրցակցին զիջել էր երկու խաղում էլ (0-2, 1-2): Երկու տարի անց «Հապոելին» պարտվեց նաեւ «Արարատը» (0-2, 0-3): Այնպես որ, «Հապոելը» լուրջ մրցակից է «Բանանցի» համար: Ի դեպ, 2001 թ.-ին «Հապոելը» հասավ մինչեւ ՈՒԵՖԱ-ի գավաթի քառորդ եզրափակիչ:

Ներկայացնում ենք չեմպիոնների լիգայի որակավորման առաջին եւ երկրորդ փուլերի վիճակահանության արդյունքները (փակագծում նշված թիմը երկրորդ փուլում կհանդիպի զույգի հաղթողի հետ).

«Փյունիկ» Հայաստան-«Ռեյկյավիկ» Իսլանդիա (ԲԿՄԱ Բուլղարիա)
«Շերիֆ» Մոլդովա-«Ֆլորա» Էստոնիա («Շախտյոր» Ուկրաինա)
«Տորսհավն» Ֆարերներ-«Կաունաս» Լիտվա («Սելթիկ» Շոտլանդիա)
ԲԱՏԵ Բելառուս-«Բոգեմիանս» Իռլանդիա («Ռոսենբորգ» Նորվեգիա)
«Վարդար» Մակեդոնիա-«Բարի թաուն» Ուելս (ԲԿՄԱ Ռուսաստան)
«Գրեվենմախեր» Լյուքսեմբուրգ-«Լեոտար» Բոսնիա («Սլավիա» Չեխիա)
ՀԻԿ Ֆինլանդիա-«Գլենտորան» Հս. Իռլանդիա (ՄՏԿ Հունգարիա)
«Սլիեմա» Մալթա-«Սկոնտո» Լատվիա (Դանիայի չեմպիոնը)
«Օմոնիա» Կիպրոս-«Իրտիշ» Ղազախստան («Վիսլա» Լեհաստան)
«Դինամո» Թբ. Վրաստան-«Տիրանա» Ալբանիա (ԳԱԿ Ավստրիա)

Որակավորման երկրորդ փուլում բացի վերը նշված զույգերից, միմյանց հետ կմրցեն նաեւ հետեւյալ թիմերը.
«Մարիբոր» Սլովենիա-«Դինամո» Խորվաթիա
«Ռապիդ» Ռումինիա»-«Անդերլեխտ» Բելգիա
«Պարտիզան» Սերբիա-«Յուրգորդեն» Շվեդիա
«Ժիլինա» Սլովակիա-«Մաքաբի» Թել Ավիվ, Իսրայել

Չեմպիոնը սկսեց պարտությամբ

Աշխարհի հնգակի չեմպիոն Բրազիլիայի հավաքականը պարտությամբ սկսեց Կոնֆեդերացիայի գավաթի խաղարկությունը: Ճիշտ է, բրազիլացիների կազմում բացակայում էին Ռոնալդոն, Ռիվալդոն եւ Ռոբերտո Կառլոսը, սակայն դա չի կարող արդարացնել բրազիլացիների պարտությունը Կամերունի հավաքականից: Առաջին խաղակեսում բրազիլացիները տիրում էին նախաձեռնությանը՝ Էմերսոնի ակտիվ խաղի շնորհիվ: 19-րդ րոպեին գոլային պահը չօգտագործեց Ադրիանոն: Իր հերթին կարող էր աչքի ընկնել կամերունցի Մբամին: Ընդմիջումից հետո աֆրիկացի ֆուտբոլիստները նկատելիորեն ուժեղացրին հարձակողական գործողությունները եւ 83-րդ րոպեին Էտոն խփեց հաղթական գոլը: «B» խմբի մյուս խաղում՝ Սենտ Էտյենում աշխարհի առաջնության բրոնզե մրցանակակիր Թուրքիայի հավաքականը 2-1 հաշվով հաղթեց ամերիկացիներին: Այդ խաղում հաշիվը 37-րդ րոպեին բացեց ամերիկացի Բիսլին, սակայն 3 րոպե անց Իլմազը 11 մ հարվածով վերականգնեց հավասարակշռությունը: Իսկ հաղթական գոլը 73-րդ րոպեին խփեց հավաքականի նորեկ Սանլին: Հետաքրքրական է, որ ըստ «Եվրոսպորտ» հեռուստաընկերության անցկացրած հարցման, որին մասնակցել են ավելի քան 7300 ֆուտբոլասերներ, մրցաշարում հաղթող կճանաչվի Բրազիլիայի կամ Թուրքիայի հավաքականը: Նրանց օգտին ձայն են տվել հարցման մասնակիցների 28 տոկոսը: 3-րդ տեղում ֆրանսիացիներն են (23 տոկոս): Մյուս մասնակիցների հաղթող դառնալու հավանականությունն այսպիսին է. ԱՄՆ (7 տոկոս), Կամերուն (5), Կոլումբիա (4), Ճապոնիա (3), Նոր Զելանդիա (2):

Ռոմանցեւը կպաշտոնավարի մինչեւ առաջին շրջանի ավարտը

Ֆուտբոլի ՌԴ առաջնության 13-րդ տուրում «Սպարտակը» սեփական հարկի տակ 0-1 հաշվով զիջեց «Սատուրնին»՝ կրելով 3-րդ անընդմեջ պարտությունը: Խաղից առաջ ակումբի նախագահ Անդրեյ Չերվիչենկոն հայտարարել էր, որ թիմի մարզչական կազմը Օլեգ Ռոմանցեւի գլխավորությամբ իր պարտականությունները պետք է կատարի մինչեւ առաջին շրջանի ավարտը: Այսպիսով, Ռոմանցեւի գլխավորությամբ «Սպարտակը» կանցկացնի եւս 2 խաղ: Չերվիչենկոն նշել է, որ եթե Ռոմանցեւն այդ ժամկետից շուտ հեռանա թիմից, ապա պետք է ակումբին վճարի այն գումարները, որով տուգանվել էր թիմը մարզչի՝ մամուլի ասուլիսներին չներկայանալու համար: Նախագահը նշել է, որ հնարավորություն է տալիս Ռոմանցեւին հանգստանալ մինչեւ մրցաշրջանի ավարտը , այլ աչքերով դիտել ֆուտբոլը, որից հետո նրան ակումբում վարչական որեւէ պաշտոն կառաջարկվի:

Առաջատարը՝ ԲԿՄԱ-ն, Էլիստայում խաղավարտից 3 րոպե առաջ կարողացավ խույս տալ պարտությունից՝ շնորհիվ Կիրիչենկոյի խփած գոլի (2-0): ԲԿՄԱ-ն 6 միավորով առաջ է անցել 2-րդ տեղում ընթացող «Դինամոյից», որը դժվարին հաղթանակ տարավ «Չեռնոմորեցի» նկատմամբ (3-2): Երկրի չեմպիոն «Լոկոմոտիվը» Վոլգոգրադում հաղթեց «Ռոտորին» (2-0): Մյուս խաղերում գրանցվեցին այսպիսի արդյունքներ. «Շիննիկ»-«Կռիլյա սովետով»՝ 2-0, «Ռուբին»-«Ռոստով»՝ 5-0, «Տորպեդո»-«Սպարտակ-Ալանիա»՝ 2-0, «Զենիթ»-«Տորպեդո-Մետալուրգ»՝ 3-0:

Էջը պատրաստեց
ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

«ՀԼՋ-2003»

ՆԱՏՕ-ի ներկայացուցիչները բարձր են գնահատել զորավարժությունների նախապատրաստական աշխատանքները

Սկիզբը էջ 1

«ՀԼՋ - 2003»-ը անցկացվում է երեք փուլով: Առաջին փուլի ընթացքում տարբեր ազգերի զինծառայողներից ձեւավորվել է առանձին ջոկերից բաղկացած գումարտակ, մասնակիցները ծանոթացել են անհատական հանձնարարություններին, ինչպես նաեւ տարբեր երկրների զենքին եւ սպառազինություններին: Երկրորդ փուլը, որին մասամբ ականատես եղան լրագրողները, կազմված է խաղաղապահ գործողությունների համար նախատեսված ՆԱՏՕ-ի ստանդարտ վարժություններից: Երրորդ փուլի ընթացքում մասնակիցները իրական միջավայրում կօգտագործեն խաղաղապահ գործողությունների եւ հրամանատարական ղեկավարման հմտությունները:

Թեեւ զորավարժության նպատակը ազգային բանակների ներկայացուցիչներին գնահատելը չէ, այնուհանդերձ, ըստ գնդապետ Իսախանյանի, հայ զինծառայողներն իրենց շատ լավ են դրսեւորել: Առաջին փուլի ընթացքում կայացած 16-կիլոմետրանոց մրցավազքում առաջին տեղը զբաղեցրել է դասակը, որի հրամանատարն է Հայաստանի խաղաղապահ գումարտակի հրամանատար, կապիտան Արտակ Տոնոյանը, իսկ դասակի կազմում են 4 ջոկ ԱՄՆ-ից, Ռուսաստանից, Վրաստանից եւ Հայաստանից: Կրակային պատրաստությունից առաջին տեղն է գրավել Վազգեն Սարգսյանի անվան Ռազմական ինստիտուտի մի կադետ: Գնդ. Իսախանյանը նշեց նաեւ, որ զորավարժությունների կազմակերպիչները շատ բարձր գնահատականի են արժանացրել Հայաստանի կողմից կատարված նախապատրաստական աշխատանքները:

Պատասխանելով լրագրողների հարցերին, համանախագահները նշեցին, որ զորավարժությունների սցենարը գրված չէ հատուկ Հայաստանի համար եւ իրական կյանքի հետ որեւէ կապ չունի: Թուրք եւ հայ զինծառայողների համատեղ մասնակցությունը զորավարժություններին որեւէ խնդիր չի առաջացրել: Ինչպես նշեց գնդապետ Իսախանյանը, զորավարժությունների ծրագրման փուլում թուրք գործընկերների հետ հայ սպաների «շփման մակարդակը շատ բարձր է եղել»: Ինչ վերաբերում է «ՀԼՋ - 2003»-ի համանախագահներին, ապա, ըստ գնդ. Իսախանյանի, նրանց ընտրությունը պատահական չէ, սակայն որեւէ կապ չունի վերջիններիս ազգության հետ: Գնդապետ Քաբաքը, լինելով ՆԱՏՕ-ի Հարավային միացյալ հրամանատարության զորավարժությունների վարչության պետը, ի պաշտոնե պատասխանատու է դրանց անցկացման համար: Հայկական կողմից զորավարժությունների անցկացման, նախապատրաստման եւ կոորդինացման համար պատասխանատու է պաշտպանության փոխնախարար, գեներալ-մայոր Արթուր Աղաբեկյանը, որի օգնականն է գնդապետ Իսախանյանը:

Մուրադ Իսախանյանը նշեց, որ հրավերի դեպքում Հայաստանը անպայման կմասնակցի հաջորդ տարի Ադրբեջանում կայանալիք զորավարժություններին: Ինչ վերաբերում է Հայաստանում անցկացվող զորավարժություններին Ադրբեջանի ներկայացուցիչների բացակայությանը, ապա, ըստ գնդապետ Քաբաքի, հրավիրվել են ՆԱՏՕ-ի բոլոր գործընկերները, որոնցից յուրաքանչյուրը ինքն է որոշում կայացրել մասնակցության մասին:

Գայթակղությունների հերթական խայծեր կամ դրամաշորթության նոր միջոցներ

Սկիզբը էջ 1

(Բացի այդ, մի՞թե միայն երիտասարդներին է հատուկ գայթակղվելը): Խորհրդավորը միշտ էլ ձգողականություն ունի, ու շատերը չեն կարողանում զսպել հետաքրքրասիրությունը եւ չհավաքել մոգական թվերը: Որովհետեւ հեռուստատեսային գովազդները ժամը մեկ, ամենահետաքրքրական ֆիլմերի ցուցադրման ժամանակ ազդարարում են, թե այդ թվերից անդին անչափ գայթակղիչ անակնկալներ են սպասվում յուրաքանչյուրին՝ նոր ծանոթությունների կյանքը փոխելու ակնկալիքներով: Եվ ինքնամոռացության թմբիրի մեջ ընկնելու ցանկությունը շատերին մոռացության է մատնում վերահաս նյութական տագնապները: Վաղվա օրվա անորոշությունը փարատելու հույսով գուշակուհիներին ապավինածների համար «Թելեպլասի» մյուս ծառայությունն էլ պակաս գայթակղիչ չէ՝ հաշվի առնելով հասարակության մի ստվար մասի տրամադրություններն այս երեւույթի նկատմամբ: Բերեմ մի երիտասարդ աղջկա օրինակ, երբ գեղեցկադեմ պարուհին (հեռուստատեսային աստղ դարձած), իր կորցրած բջջային հեռախոսը գտնելու հույսով, դիմել է Օղակաձեւ զբոսայգու հատվածներում բնակվող «հայտնի» մի գուշակուհու: Սա էլ պահանջել է իր մոտ բերել 12-ամյա մի տղայի: Իբր թե անհայտ հրաշահեղուկը վերջինիս մատնեմասի եղունգին կաթեցնելու միջոցով մտքի պայծառացումների շնորհիվ հայտնաբերելու է կորած իրի տեղը՝ պատկառելի գին պահանջելով: Թե նման տգիտությունների պայմաններում որքան հաճախորդ կարող է ունենալ «Թելեպլասի» գուշակությունների ծառայությունը, կազմակերպիչներն, անկասկած, հաշվարկել, նոր են նախաձեռնել իրենց բիզնեսը: Մոլորյալների եւ մոլեռանդների քանակն՝ ի հաշիվ աշխարհիկ եւ հոգեւոր զանազան ծուղակներ սարքող աճպարարների, օրեցօր շատանում է, որի հետեւանքով բազմաթիվ ընտանիքներ կանգնում են նյութական, հոգեբանական, բարոյական դժվարին կացության առջեւ:

«Թելեպլասի» ծառայություններին տեղի տված քաղաքացիներին մեղադրել բնավ էլ պետք չէ, հետաքրքրասիրությունից մեկ-երկու փորձ են արել ու հսկայական գումարների տակ ընկել: Բոլորս էլ գիտենք, թե բջջային կամ միջքաղաքային հեռախոսակապից օգտվելիս ինչպես են մեր հաշվին աստղաբաշխական թվեր հայտնվում: Թե որքան կարող է հասարակությունը դիմանալ այս խաբեություններին, հայտնի չէ: «Նման ծառայություններ ամենուրեք կան: Բայց տարօրինակը գովազդի ձեւերն են մեզանում. ճիշտ չէ սովորական հեռուստատեսային ժամերին տեղադրել, երբ անչափահասներն են հետեւում, կամ օրաթերթերում՝ համապատասխան բնույթի հանդեսներում դրվելու փոխարեն: Հետաքրքրական են նաեւ սակագները, ինչ որակի ծառայություն պիտի լինի, որ այդքան բարձր գնահատվի: «Եթե այդքան գումար ունենամ, ինչո՞ւ եմ դրանց վրա վատնում, դուրս կգամ ու ավելի «շոշափելի» օբյեկտ կգտնեմ զվարճանքի», իմ հետաքրքրություններին պատասխանեց 20-ամյա մի երիտասարդ:

Իսկ ավելի յուրօրինակն այն է, որ հեռուստատեսային լրատվական ծրագրերում հնչում է մեկնաբանի քննադատությունը «Թելեպլասի» խայտառակությունների մասին, լացող, գոռգոռացող տուժած քաղաքացիների են ցույց տալիս, իսկ 30 րոպե հետո եթերը տրամադրում են նույն գովազդատուին: Այսպես է մի քանի օրաթերթերում եւս: Մի էջի վրա «մերկացումներ», հաջորդ էջին՝ գովազդը:

Երեսպաշտության ու փարիսեցիության այս համընդհանուր մթնոլորտում զարմանալի ոչինչ չկա. բոլորին դրամ է պետք, մնացածը գրչի վարժանքներ են պարզապես:

ԼՂՀ

Ստեփանակերտում էլ են ջրաչափեր տեղադրում

Ստեփանակերտի «Ջրմուղ-կոյուղի» ՊՓԲԸ գործադիր տնօրեն Վլադիմիր Արզումանյանի ներկայացրած տվյալներով, առ այսօր մայրաքաղաքի բնակարաններում տեղադրվել է ավելի քան 2.400 ջրաչափ: Դրանց թիվն առաջիկայում պետք է ավելանա եւս 4.000-ով: Մեկ ջրաչափի տեղադրումն, ըստ տնօրենի, արժե 14.000 դրամ, որից 3.800 դրամը տեղադրման վարձն է: Ընդ որում, ընդհանուր այդ վճարը քաղաքացին կարող է կատարել երկու տարվա ընթացքում:

Ընկերությունում համոզված են, որ ջրաչափերի համատարած տեղադրմամբ մայրաքաղաքում ջրի քանակը կավելանա:

Դարձյալ Վ. Արզումանյանի տեղեկատվությամբ, Ստեփանակերտի բնակիչների ջրի պահանջը գերազանցում է ընդունված նորմերը: Այն թաղամասերը, որտեղ սեփական տներն են տեղաբաշխված, բնակիչները շահագրգռված չեն ջրաչափերի տեղադրմամբ, որովհետեւ այդ ջրով նրանք ոռոգում են նաեւ իրենց բանջարանոցները, ունեն խոշորածավալ ջրատարողություններ: Եվ այս պարագայում, իհարկե, նրանց ձեռնտու է խորանարդ մետրի համար 24 դրամ վճարելը:

Ջրօգտագործման համար բնակչության պարտքը, Վ. Արզումանյանի խոսքերով, կազմում է շուրջ 72 մլն դրամ: Ընկերությունը ստիպված է եղել պարտատուներից ջրավարձերը ստանալու նպատակով դիմել դատարան: Առաջին ատյանի դատարանում արդեն քննվել է 250 դիմում, որի արդյունքում պարտատուները ստիպված են եղել վճարել պարտքը: «Ջրմուղ-կոյուղու» տնօրենը գտնում է, որ ջրավարձը չմուծած քաղաքացիներից շատերը մեղավոր չեն, որովհետեւ նրանք իրականում անվճարունակ են, թեեւ չեն հրաժարվում մուծումից: Այդուհանդերձ, դատական կարգով վարձավճարների գանձումը շարունակվում է եւ գործընթացը բնակչության պարտքերը լրիվ վերադարձնելու նպատակ ունի:

Վ. Արզումանյանի մեկնաբանությամբ, ջրի համար նախատեսված վճարաչափը գերազանցում է այն բնակչին հասցնելու համար արվող բոլոր ծախսերը: Առանձնապես ամառային ամիսներին ընկերությունը ստիպված է լինում առավել մեծ քանակությամբ էլեկտրաէներգիա ծախսել ջրառման համար:

Ամառն արդեն իր իրավունքների մեջ է: Շոգերի սկսվելու հետ կնվազի նաեւ ԼՂՀ մայրաքաղաքում ջրի քանակը, իսկ դա նշանակում է, որ ստեփանակերտցիները պարզապես պետք է ջուրն առավել խնայողաբար ու նպատակային օգտագործեն, քանի որ նյութատեխնիկական բարեփոխումներով առայժմ պատկան մարմինները չեն կարող ապահովել Ստեփանակերտի բնակչության անհրաժեշտ ջրի պահանջը:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

ARMENTEL

Արմենտելը տեղեկացնում է բջջային կապի կանխավճարային համակարգի (Easy card-ի) բաժանորդներին

✓ Բջջային կանխավճարային քարտը (Easy card-ը) կորցրած քաղաքացիները քարտի անջատման համար կարող են դիմել Արմենտել ՀՁ (Ահարոնյան 2) շարժական կապի ծառայությունների վարչություն, իրենց հետ ունենալով քարտի PIN եւ PUK կոդերը պարունակող ծրարը եւ անձնագիրը:

✓ Արմենտել ՀՁ-ն լրացուցիչ տեղեկացնում է, որ անջատված քարտերը չեն փոխարինվում եւ չեն վերականգնվում:

Հարգելի քաղաքացիներ, բջջային կանխավճարային քարտ (Easy card) ձեռք բերելիս պահանջեք քարտի PIN եւ PUK կոդերը պարունակող ծրարը: Այդ ծրարի բացակայության դեպքում կապուղին ենթակա է անջատման:

ԱՐՄԵՆՏԵԼ ՀՁ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ARMENTEL

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Արմենտելը հայտարարում է մրցույթ աշխատանքի անվտանգությունն ապահովող միջոցների մատակարարման համար:

Մրցույթին կարող են մասնակցել ինչպես ՀՀ-ում, այնպես էլ արտասահմանում գրանցված կազմակերպությունները:

Մրցույթի անցկացման պայմանները եւ պահանջվող ապրանքների տեխնիկական նկարագրերը շահագրգիռ կազմակերպությունները կարող են ստանալ հետեւյալ հասցեով՝

Արմենտել ՀՁ, Ահարոնյան 2, 2-րդ հարկ, 216 սենյակ, հեռ. 28-70-66:

Առաջարկների ներկայացման վերջին ժամկետը՝ 2003 թ.-ի հուլիսի 7-ը, ժամը 12.00:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

☎ 529353
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- «Ռոսիա» կինոթատրոնի տարածքում կորել է Նարինե Նալբանդյանի վարորդական իրավունքը, Աշոտ Խուդավերդյանի վարորդական իրավունքը, Վազ 21 07 մակնիշի 02 SL 169 համարանիշով ավտոմեքենայի տեխնիկական անձնագիրը: Վերադարձնողին խոստանում ենք դրամական պարգեւ: Հեռ. 36 97 98, 09 40 74 16:
- Վաճառվում է գերմանական գորգ, նոր, 2x3: Գինը՝ 200 դոլար: Հեռ. 429343:
- Վաճառվում է մետաղյա ավտոտնակ, 18 քմ (3x6): Հեռ. 725449:
- Վաճառվում է 3 սենյականոց (վերափոխված 5 սենյակի) բնակարան մայրաքաղաքի փոքր կենտրոնում: Հասցեն՝ Աղայան 9, բն. 63: Հեռ. 267992:
- Վաճառվում է խանութի տարածք, վերանորոգված, բնակելի շենքի 1-ին հարկում՝ իր նկուղներով: Հասցեն՝ Բաբաջանյան փ., 153/1 շենք: Հեռ. 239191:
- Վաճառվում են դոբերման պինչեր ցեղատեսակի զտարյուն նորածին ձագեր: Գինը՝ 100 դոլար: Հեռ. 584908:

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունյաց 70ա Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրուած է տպագրութեան՝ 20. 6. 2003 Գինը՝ 100 դրամ